Էջմիածին

1988

Դ

Ամբ 146

ԽԵ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Վաղարշապատ

1988

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՈՒՐԲ ՋԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(3 ապրիլ 1988 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ եւ երկնաւոր
Քեզ աւետիք խնդութեան հարսն ի յերկրէ եկեղեցի» (Շարական):

Սիրելի հավատացյալ զավակներ Մեր,

«Այսօր մեռելներից հարություն է առել երկնավոր անմահ փեսան, քեզ ավետիս խնդության՝ ով եկեղեցի, հարսդ երկրավոր»:

Մեր Մայր Եկեղեցու երանելի հայրերը, զմայլելի ոգեշնչումով են փառաբանել Քրիստոսի հրաշալի Հարության ավետիսը, շարականների երգերով, որոնք փոխանցվել են սերնդից սերունդ և հասել մեզ, մեր օրերին, որպես մեր հոգիների անուշաբույր բալասան, որպես լուսեղեն երազանք, որպես հույս փրկության:

Եկեք լսենք մեր նախնյաց ձայնը նույն շարականներով մեզ հասած՝

«Արարիչը Աստված ի խաչ բարձրացավ և մեղքերով մեռյալներին, խաչափայտի ճաշակմամբ նորոգյալ կենդանացրեց, որով հալածվեց անգիտության խավարը և գիտության լույսը ծագեց՝ մեռելներից հարություն առած Քրիստոսով»:

Այսպես ահա, նաև մեր օրերին լույս բաշխող ավետիսը Քրիստոսի Հարության, վերստին իր ճառագայթներն է տարածում մեր հոգիների վրա և լուսավորում մեր կյանքը: Սուրբ Հարության հրաշք պահը, այդ լույսի ճանապարհով մեզանից ամեն մեկին մղում է մեր հայացքը դարձնել դեպի մեր ներաշխարհը և խորհրդածել մեր կյանքի իմաստի մասին, մղում է մեզ ձերբազատվել մեղքի կապանքներից ու ապրել երազանքը մեր հոգիների փրկության, հավիտենական կյանքին արժանանալու մեծ հույսով:

Հոգու անմահության հույսը, խարսխվում է մանավանդ Քրիստոսի Հարության ճշմարտության վրա: Պողոս առաքյալը, այս հույսն է, որ զորացնում է մեր մեջ, ասելով՝ «Արդ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, առա-

ջին պտուղ ընջեցելոց. քանզի մարդով եղև մահ. և մարդով յարութիւն մեռելոց» (Ա. Կորնթ. ԺԵ 20—21):

Քրիստոսի զոհաբերությունը խաչափայտի վրա և նրա հաղթական Հարությունը, դարեր շարունակ մշտապես ուղեկցել են մեր բարեպաշտ նախնիներին, իրենց կյանքի ճանապարհին, մանավանդ դառնությանց, հալածանքների ու նահատակությանց օրերին, երբ նրանք համբերությամբ կրել են իրենց խաչը ու պայքարել դառն ճակատագրի դեմ, այն հավատքով, որ մահվամբ կարելի է հասնել ճշմարիտ կյանքի, զոհաբերումով՝ հաղթանակի և տառապանքով՝ անանց ուրախությունների: Այս ապրումներով, տեսիլքներով, իրար հաջորդող սերունդները ամրապնդել են մեր ազգի գոյատևելու հավատքն ու կամեցողությունը մինչև մեր օրերը:

Մեր նախնիները ապրել են Քրիստոսի Հարության տեսիլքով՝ դարեր ու դարեր, և իրենց աչքերը փակել հավերժական կյանքի արժանանալու հույսով, սրբազան ժառանգություն թողնելով այդ հույսը մեզ՝ այսօրվանցերիս, որ ապրում ենք նույն հույզերով, նույն սպասումներով, հավատալով, թե մենք բոլորս, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, գտնվում ենք հրաշք Հարության շնորհների ներքև:

Հավատում ենք նաև, ինչպես մեր նախնիք, որ Հարության ճառագայթումը աշխարհի վրա, ճառագայթումն է արդարության արեգակի, որ լուսավորում է նաև մեր ազգի կյանքի ճանապարհը, արդարության հաղթության հույսով, զի «արդարների ջահը լուսավորվում է, իսկ անօրենների՝ հանգում» (Առակք Սողոմոնի):

Մեր կյանքի ջահը լուսավոր է մնացել նաև մեր օրերին, զի բազում փորձություններից և զոհաբերություններից հետո, մանավանդ 1915 թվի աներևոր ողբերգությունից հետո, մեր Մայր Եկեղեցին ու ժողովուրդը, թե ի սփյուռս աշխարհի և թե մանավանդ մեր մայր հողի, ապրում են հոգևոր ու նյութական վերաշինության և ազգային զարթոնքի մի շրջան, արդար սպասումների իրականացման տեսիլքով: Մնում է, որ բոլոր հայերը, ուր էլ որ գտնվեն, ուղիղ տեսնեն և գնահատեն մեր հայրենական ներկան, ուղիղ տեսնեն ու գնահատեն մեր ժողովրդի և հայրենիքի հիմնական շահերը, չմոռանան անցյալի փորձառությունները ու հուսախաբությունները, և համահայկական միասնությամբ մնան հաստատուն ու անպարտ՝ մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ Եկեղեցի նշանարանի ներքո: Սուրբ Էջմիածինը օրհնում է այդ ոգին, օրհնում է այդ միասնությունը, օրհնում է հայրենաշեն աշխատանքի ու պայքարի ճանապարհը:

Այս օրերին սույն խոհերը առավել այժմեական են հնչում բոլորիս համար, զի արդարության զգացումով տոգորված մեր ողջ ժողովուրդը, վերջին երկու ամիսների ընթացքում, Լեռնային Ղարաբաղի իր եղբայրների և քույրերի օրինական սպասումներին ընդուն կանգնեց՝ խաղաղ ու կարգապահ արտահայտություններով, թե մեր մայր երկրում, թե սփյուռքում, հավատալով առաջադրված հարցերի բարվոք լուծման, սահմանադրական, ժողովրդավարական սկզբունքների և խորհրդային ազգությունների անքակտելի եղբայրության հիմքերի վրա:

Փրկչին մեր Քրիստոսի Հարության հաղթանակը թող մնա նաև այսօր և միշտ, մեր ազգի զավակների ներշնչանքն ու ստուգությունը:

«Շնորհք Սուրբ Յարութեան Տեառն մերոյ Հիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ». ամեն:



ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՄԱՏԱՂՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԼԻՈՆԻ ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՎՈ ՄԵՋ

Նստված՝ Եպս. Զաքարյանը վերեւափառ Հայրապետի կողակից արժանացած որեք հայրենասնվեր գործիչների հետ

Ս. Հակոբի տոնակատարությունը ամեն տարի բնականաբար մեծ խանդավառություն կստեղծե մեր համայնքին մեջ: Սակայն այս տարի հայրապետական պատվիրակության տեղապահին ներկայությունը ավելի մեծ փայլ մը տվավ ալանդա-

կան այս տոնախմբության։ Գերաշնորհ Տ. Գյուտ եպիսկոպոս Նագգաշյանի այցելության առթիվ կատարվեցավ նաև Լիոնի «Սերովբե արքեպս. Մանուկյան» գրադարանին պաշտոնական բացումը։

Սրբազան հայրը Լիոն ժամանեց դեկտեմբեր 12-ին։ Երեկոյան, հայրապետական պատվիրակի Լիոնի փոխանորդ գերաշնորհ Տ. Նորվան եպս. Զաքարյանի և եկեղեցական վարչության նախաձեռնությամբ, ի պատիվ պատվիրակ սրբազան հոր, տրվեցավ մտերիմ ճաշկերույթ։ Ներկա էին հոգևորականաց դասը, ինչպես նաև եկեղեցական վարչության և Տիկնանց Միության ներկայացուցիչները։

Հաջորդ օրը Գյուտ սրբազանը, առավոտյան ժամերգության նախագահելեն վերջ, պատարագեց և քարոզեց Սուրբ Հակոբ Մայր եկեղեցվո մեջ։

Հավարտ սուրբ պատարագի մատաղօրհնեքը կատարվեցավ, ինչպես նաև հոգեհանգստյան պաշտոն նախկին պատվիրակներուն հոգիներուն համար՝ հոգեղույս Տեր Վռամշապուհ արքեպս. Քիպարյանի, Տեր Արտավազդ արքեպս. Այուրմեջյանի և Տեր Սերովբե արքեպս. Մանուկյանի։

Ժամը 12.30-ին ներկա հասարակությունը թարձրացավ առաջնորդարանին երկրորդ հարկը՝ մասնակցելու համար «Սերովբե արքեպս. Մանուկյան» գրադարանին բացման արարողության։ Գերաշնորհ Գյուտ եպիսկոպոսը իջեցրեց հայրապետական արծիվով դրոշմված մանուշակագույն կերպասը, և մարմարյա ցուցատախտակը հայտնվեցավ բոլորին։

Այս արարողության հաջորդեց ժողովրդային հացկերույթ մը եկեղեցվո մեծ դահլիճին մեջ։ Այս առթիվ եկեղեցվո վարչությունը հատուկ հրավերներ հղած էր լիոնաբնակ ծանոթ ազգայիններու։ Ներկա էին Մայր Աթոռի երկու բարերարներ՝ հանձին պրն. Կ. Ճընկրտրյանի և պրն. Մ. Պահատուրյանի։

Ճաշկերույթի ընթացքին սրբազան հայրը հայրապետական կոնդակներ հանձնեց լիոնաբնակ երեք վաստակավոր գործիչներուն՝ տիկին Շնորհիկ Օհանեսյանին, որ երկար տարիներ շարունակ «Աղքատախնամ»-ով զբաղած է, տիկին Գեղանույշ Գայթանճյանին, հայկական միջոցի դպրոցին մեջ իր ուսուցչական ծառայության համար, պարոն Վաղինակ Միսքճյանին, իր երկարամյա ազգային ու եկեղեցական ծառայության համար։

Հանդիսությունը վերջացավ գերաշնորհ Տ. Գյուտ եպիսկոպոս Նագգաշյանի խրատականով ու աղոթքով։

ՍԱՀԱԿ ՍՐԿ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԲԱՑՈՒՄ ԼԻՈՆԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՊԻՈՆԻՆ

1987 թ. հոկտեմբեր 30-ին, ուրբաթ օր, երեկոյան ժամը 20-ին, հոծ բազմություն մը հավաքված էր Լիոնի Կաթողիկե համալսարանին պատվո դահլիճին մեջ՝ մասնակցելու համար հայագիտական նորաստեղծ ամպիոնին բացման արարողության։ Ներկա էին բազմաթիվ հայ և ֆրանսացի հյուրեր, ինչպես նաև ուսանողությունը։

Համալսարանին անունով ներկա հասարակության բարի գալուստ մաղթեցին հաստատության ռեկտոր գերաշնորհ Ժ. Տրֆուա եպիսկոպոսը և աստվածաբանության ֆակուլտետի երեց հայր Լըմոնոն։ Երկուքն ալ իրենց խանդավառությունը հայտնեցին ի տես այս նոր ձեռնարկին, որ կուգա նոր զարկ մը տալու էջմյումենիք գետնին վրա արդեն կատարվող աշխատանքին։ Պատահական չէ, ըսավ Տրֆուա եպիսկոպոս, որ այս ձեռնարկները տեղ կգտնեն Լիոնի մեջ, այն հին քրիստոնեական համայնքի մեջ, ուր իր առաքելությունը ավարտեց Էջմյումենիզմի նախահայր Իրենեոսը։

Գերաշնորհ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյան, որ ամիսներե ի վեր կաշխատեր այս ծրագրին շուրջ, իր խորին շնորհակալությունները հայտնեց նախ Լիոնի Կաթողիկե առաջնորդ կարտինալ Տրգուրթրեին, որուն շնորհիվ կարելի եղավ այս ամպիոնը հիմնել, հետո բոլոր անոնց, որոնք ուղղակի կամ անուղղակի ձևով իրենց մասնակցությունը բերին։ Այս առթիվ սրբազան հայրը հատկապես հիշեց Փարիզեն հրավիրված դասախոսը՝ պարոն Գրիգոր Պըլտյանը (Գրիգոր Պըլտյան երկար տարիներե ի վեր հայկ. գրականություն կդասավանդե Փարիզի «Արևելյան լեզուներու և քաղաքակրթությանց ազգային ինստիտուտին» մեջ)։

Նորվան սրբազան իր խոսքը ավարտելով՝ շնորհակալություն հայտնեց Կյուլպենկյան և Պուլլիոքյան հաստատությունը-

Լիոնի Կաթողիկե համալսարանի խորհրդանշանը

ներում և կարգ մը բարերարներու իրենց նյութական աջակցության համար: Սրբազան հայրը հույս հայտնեց, որ մոտ ապագային այս ամպիոնը ընդլայնելով իր գործունեությունը, սերտ կապեր կհաստատե մյուս հայագիտական կեդրոններուն հետ, և հատկապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանին հետ:

Ընդգծելու արժանի է այն, որ Սուրբ Հակոբ Մայր եկեղեցվո Էրքյումենիք հարաբերություններու պատասխանատու տիկին Սաթենիկ Կոստանյանին եռանդը և կորովը վճռական եղան այս ձեռնարկին հաջողության համար: Փաստ մը, որ կհաստատե, թե կիները իրենց տեղը ունին Հայ Եկեղեցվո կյանքին մեջ:

Լիոնի եպիսկոպոսարանի սփռած «Հաղորդագրության» մեջ ի մասնավորի կըսվի.

«Այս դասընթացքին նպատակն է ուսումնասիրել հայ հոգևոր գրականությունը, ի մասնավորի ավանդական հոգեկանությունը, այնպես, ինչպես կկազմավորվի անիկա գրերու գյուտեն վերջ, իբրև Սուրբ Գրական, դավանաբանական, մեկնողական ու աստվածաբանական արտադրություն: Այլ խոսքով՝ դասընթացքը կմիտի վերլուծել հայ կրոնական ավանդությունը իր գործերուն մեջ»:

ՍԱՀԱԿ ՍՐԿ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊԱՎԼՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ),

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),

Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԻՈԴՈՐՈՍԻՆ (Երուսաղեմ),

Ղպտի Ուղղափառ Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Կահիրե),

Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ԹԵՔԼԷ ՀԱՅՄԱՆՈԹԻՆ (Ադիս Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն **ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ** (Քոթայամ),

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),

Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍՏԻՆ (Բուխարեստ),

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),

Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔԷԱ Ա ԻՎԱՍԻՆ (Դամասկոս).

Անտիոքի և համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
Անտիոքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ-ԻՆ (Բեյրութ),
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ Դ-ԻՆ (Դամասկոս),
Քենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՌՈԲԵՐՏ ՌԸՆՍԻԻՆ (Լոնդոն),
Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն ԳԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),
Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ԴՈՐՈԹԵՅԻՆ (Պրագա),
Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոզիա),
Անտիոքի Մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն ՄԱՐ ՆԱՍՐԱԼԼԱ ԲՈՒՏՐՈՍ ՍՖԵՅՐԻՆ (Բքերքե),
Նորին Ամենապատվություն կարդինալ ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Վատիկան),
Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն Դոկտ. ՀԵՐՄԱՆ ԳՐՈՆԵՐԻՆ (Վիեննա),
Քրիստոնեական Միության Քարտուղարության նախագահ, Նորին Ամենապատվություն կարդինալ Ժ. Գ. Մ. ՎԻԼԼԵԲՐԱՆԴՍԻՆ (Վատիկան),
Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն ԺԱՆ ՄԱՐԻ ԼԵՅՈՒՍՏԻԺԵԻՆ (Փարիզ),
Լիոնի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ԱԼԲԵՐ ԴԵԿՈՒՐՍԵԻՆ (Լիոն),
Լատվիական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԷՐԻԿ ՄԵՍՏԵՐՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԿՈՒՆՈ ՊԱՅՈՒԼԱՅԻՆ (Տալլին),
Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՉԻՆԻԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի նախագահ, Նորին Սրբազնություն ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻՆ (Ժնև),
Մխիթարյան ուխտի մեծավոր Հայր ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),

Մեզ համար մեծ ուրախություն է մեր Փրկչի Հիսուսի Քրիստոսի հրաշալի Հարության ավետիսով հղել Ձերդ Սրբության եղբայրական Մեր սիրո ողջույնը և Մեր աղոթքը Սուրբ Էջմիածնից Ձեր պատմական Սուրբ եկե-

ղեցու անսասանության և ձեր հավատացյալ ժողովրդի կյանքի լուսավորման համար։

Հրաշքի այս ժամին ջերմապես մաղթում ենք, որ Սուրբ Հարության շնորհներով զորացած ու քաջառողջ՝ շարունակեք Ձեր սուրբ առաքելությունը ի փառս Քրիստոսի սուրբ Եկեղեցու և ի խաղաղություն համայն աշխարհի։

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս։

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

*
* *

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության շնորհավորական գրությունների, ստացվել են քույր Եկեղեցիների կրոնական պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների միջև։

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար։



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ.
Խաղաղութեան ձայն հնչեցաւ.
Սէր յընդհանուրս սփռեցաւ»:

Ահա, վերստին ծագեց լույսը Քրիստոսի գերեզմանեն, Հարության ավետիսով: Վերստին իջավ մեր սրտերուն՝ առավոտը լուսո: Վերստին պայծառացավ հույսը մեր մեղքերու թողության և մեր հոգիներու փրկության:

Փառք Հարության Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի:

Այս լույս առավոտուն, Սուրբ Էջմիածնի հոգևոր բարձունքեն կհղեմք Մեր գատկական ողջույնը Ձեզ, պատմական Աթոռիդ ուխտապահ սպասավորներուն ու հավատացյալ ժողովրդյան, մաղթանքով բարի, որ Սուրբ Հարության շնորհները առատապես բաշխվին ձեր եկեղեցյաց և հավատացյալներուն, ի հոգևոր շինություն նրանց կյանքին:

Մեր ջերմ աղոթքն է նաև, որ Քրիստոսի խաղաղարար հոգին ճառագայթե հորիզոնեն հորիզոն համայն աշխարհի ժողովուրդներու վրա, ու մեր օրերուն բազում տագնապներով տառապող մարդկությունը հասնի վերջնական խաղաղության և եղբայրության նավահանգիստը:

Ողջ լերուք և զորացյալ շնորհոք Սուրբ Հարության Տեառն մերո և Փրկչին Հիսուսի Քրիստոսի:

Եղբայրական սիրո ողջունիվ՝

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով լեցուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր Ընդհանրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Ապրիլի 8-ին, կիրակի.—Զատիկ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը, որ նաև Զատիկ է կոչվում, քրիստոնեական կրոնի մեծագույն տոներից մեկն է: Յուրաքանչյուր տարի այն մեծ հանդիսությամբ է նշվում Մայր Աթոռում: Նախորդ տարիների համեմատությամբ այս տարի ավելի մեծ թվով ուխտավորներ էին եկել Ս. Էջմիածին:

Առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով ու «Հրաշափառ» շարականի երգեցողությամբ, առաջնորդվում է Մայր տաճար՝ Զատկական հանդիսավոր պատարագը մատուցելու:

Հայրապետական Զատկական պատարագին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, հայրենի մտավորականներ, սփյուռքահայ հյուրեր, ուխտավորներ:

Ս. պատարագին ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ստեփան Վարդանյանը ու տեղակալ պրն. Ռաֆիկ Զարգարյանը:

Սուրբ պատարագի հոգեպարար երգեցողությունը կատարում է Մայր տաճարի քառաձայն երգչախումբը: Երգեցողությանն իր մասնակցությունը բերեց նաև տաղանդաշատ երգչուհի Գոհար Գասպարյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ և երկնաւոր, քեզ աւետիք խնդութեան հարսն ի յերկրէ եկեղեցի» (Շարական) բնաբանով քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 3):

Պատարագի ավարտից հետո Վեհափառ Հայրապետը նույն հանդիսավորությամբ առաջնորդվում է Վեհարան՝ իր ճանապարհին օրհնելով հավատացյալների բազմությանը: Վեհարանում եկեղեցական թափորի մասնակիցները աջահամբույրով շնորհավորում են Վեհափառ Հայրապետին Զատկական տոնի առթիվ:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց». «Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԽԱՐՉԵՎԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 4—5 օրերին Հայաստանում էր գտնվում ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ տիար Կոնստանտին Խարչևը:

Ապրիլի 5-ին տիար Խարչևը հանդիպում ունեցավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ: Բարեկամական ջերմ մթնոլորտում զրույց ծավալվեց Հայ Եկեղեցու ներկա վիճակի և բարգավաճման հեռանկարների մասին: Տիար Խարչևը բարձր գնահատեց Վեհափառ Հայրապետի հետևողական ջանքերը ժողովուրդների բարեկամության և աշխարհի խաղաղության գործում:

Նույն օրը, երեկոյան, Արարատյան հայրապետական թեմի նորակառույց առաջնորդարանի դահլիճում տիար Խարչևը հանդիպում ունեցավ Արարատյան թեմի գործադիր մարմինների, քահանայից դասի, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանության հետ: Արդյունավետ զրույց ծավալվեց վերակառուցման և հրապարակայնության պայմաններում Եկեղեցու դերի մասին:

Վերջում տիար Խարչևը պատասխանեց ներկաներին հուզող հարցերին:

Վեհափառ Հայրապետի և Արարատյան հայրապետական թեմի հոգևոր դասի հետ հանդիպումներին ներկա էին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանը և տեղական տիար Ռաֆիկ Զարգարյանը:

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

«Վարդանանք մեզ հետ են, մեզ հետ քայլում են, մեզ ներշնչում, մեզ առաջնորդում և ապահովում մեր բոլոր արդար իղձերի ապագա իրականացումը: Լույս և հավերժական փառք Վարդանանց սուրբ հիշատակին»:
(Վեհափառ Հայրապետի խոսքից՝ Վարդանանց տոնակատարության առթիվ, «Էջմիածին», 1981 թ., Բ, էջ 10):

Ավելի քան 1500 տարիներ են անցել այն օրից, երբ հայ ժողովուրդը Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ կենաց-մահու ճակատամարտի դուրս եկավ իր ազատությունն ու ինքնությունը կապտել ցանկացող պարսիկ բռնատիրության դեմ: Քրիստոնեության պատմության այն առաջին դեպքերից մեկն էր Վարդանանց հերոսամարտը, երբ մի ողջ ժողովուրդ ոտքի կանգնեց՝ իր կյանքով պահպանելու քրիստոնեությունը՝ հանուն հայրենյաց, հանուն հավատի նշանաբանով: «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» խոսքը Վարդանանց հերոսամարտի առաջին իսկ օրվանից որդեգրվեց որպես հայ ժողովրդի գոյաձև հետագա բոլոր դարերի համար:

Հայ ժողովուրդը բարձր է գնահատել Վարդանանց հերոսամարտի նշանակությունը, ոգեշնչվել նրանով, իր ճակատագրական բոլոր պահերին ոգեկոչել է Վարդանանց հերոսներին:

Հայ ժողովրդի գոյամարտն էր Վարդանանց հերոսամարտը, որ շարունակվում է մինչև այսօր իր տարբեր ձևերով, իր տարբեր երանգներով: Գոյամարտ՝ պարսիկ, արաբ, մոնղոլ ու թուրք բարբարոսների դեմ, գոյամարտ սեփական մոխիրներից հարություն առնելու, գոյամարտ՝ մանավանդ Սփյուռքում, ինքնապահպանման ու իր արդար իրավունքների պաշտպանության համար:

Դարեր շարունակ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրական ու արբագործված ավանդություններից մեկն է հանդիսանում 451 թ. Ավարայրի հերոսամարտում զոհված հայ մարտիկների հիշատակի ոգեկոչումը: Ամեն տարի, Վարդանանց

հիշատակի օրը, Ս. Էջմիածինը լեփ-լեցուն է հավատացյալներով, հայ ժողովրդի տարբեր խավերի ներկայացուցիչներով:

Այդ օրը միաժամանակ նշվում է նաև Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի անվանակոչության տարեդարձը:

Այս տարի ևս Մայր Աթոռում մեծ շուքով ու հանդիսավորությամբ նշվեցին այդ զույգ տոները:

Փետրվարի 11-ին, հինգշաբթի օրը, առավոտյան, 1700-ամյա Հայոց Մայրավանքի աղոթաբույր կամարների ներքո հնչում են «Նորահրաշ» և «Արիացեալք» հոգելից շարականները:

Մայր տաճարում հանդիսավոր ժամերգությունից հետո, ժամը 10.30-ին, Ավագ խորանի վրա սկսվում է ս. պատարագի արարողությունը: Օրվա պատարագիչն է հոգեշնորհ Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանը:

Պատարագի ընթացքում Մայր տաճարի զանգերի ղողանջների ներքո, եկեղեցական հանդիսավոր թափորով Մայր տաճար է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը:

Հավարտ պատարագի պատարագիչ հայր սուրբը Իջման ս. սեղանից խոսում է հայրենաշունչ մի քարոզ՝ «Զի օրէնք խաղաղութեանն ոչ է հանապազ ողջունելի, այլ ժամանակի ընտրողութեամբ: Թէ հնար է ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք, յորժամ ոչ եղև հնար՝ ընտրեաց զպատերազմելն» (Ներսես Լամբրոնացի) բնաբանով: Քարոզիչ հայր սուրբը նախ խոսեց մեր ժողովրդի պատմության ընթացքում Վարդանանց հերոսամարտի կատարած մեծ դերի մասին, ապա նկարագրելով պատմական ժամանակաշրջանը, ասաց. «451 թվականը կարևոր նշանակություն ունի Քրիստոսի Եկեղեցու պատմության մեջ, որովհետև եթե արևելքում Ավարայրի ճակատամարտում, հայերը պաշտպանեցին Հիսուսին, Հիսուսի ավանդած հավատքը, ապա արևմուտքում, նույն այդ մտայնությամբ, ընդդեմ Աթիլլայի հրոսակների դուրս եկան եվրոպական ժողովուրդները և պաշտպանեցին քրիստոնեությունը: ...451 թ. երկու կայսրությունների՝ Բյուզանդիոնի ու Պարսկաստանի քաղաքական հայացքները, խաչաձևվելով միմյանց Հայաստան աշխարհում, մի նոր խաչ էին կազմում, սակայն ոչ Տերունի, ոչ էլ փրկական: Հռոմը և Պոլիսը Քաղկեդոնում ժողով էին գումարել՝ որոշելու համար, թե Քրիստոսի մարդկային բնությունն է կարևոր, թե Աստվածայինը: Իսկ այդ պահին հայերը Քրիստոսի համար պատերազմ էին մղում ընդդեմ պարսիկների, իրենց արյամբ մարտիրոսվում և որդեգրվում Քրիստոսի փրկարար մատյանի մեջ: ...Այս է պատճառը, որ երկինք խոյացած այս սրբազան տաճարը իր կենտրոնական խորանի ներքևում ունի մեկ փոքրիկ ատրուշան, որ եղել է հեթանոսական պաշտամունքի վայր: Վարդանանց խորհրդի ամենաարտահայտչական և կարևոր շոշափելի արձանագրությունը մարմնացյալ այս տաճարն է, որ իր կրունկի տակ է առել հեթանոսական զրադաշտական կրոնը: Մեզ համար Վարդանանց պատերազմը չավարտվեց աշխարհագրական նշանակություն ունեցող Ավարայրի փոքրիկ դաշտում: Այն շարունակվեց և տարածվեց մեր բոլոր դարերի ընթացքին, մեր հոգու և մտքի բոլոր մաքառումների մեջ հասավ պահլավունիներին, դավիթբեկերին, անդրանիկներին, ֆիդայիներին, Հայրենական մեծ պատերազմի ընթացքում մեր հերոսներին, ընդհուպ մինչև մեր այսօրվա շինարար Վազգեն Ա կաթողիկոսը:

Թող Լամբրոնացու խոսքը դառնա Վարդան Մամիկոնյանի միակ փոքրիկ խնդրանքը մեզանից, և մենք ուխտենք Իջման սեղանի առջև հավատարիմ մնալ Վարդանանց խորհուրդին և շարունակել նույն մեր հերոսների մտածողությամբ կերտել մեր ապագան: Վարդանանց խորհուրդի ամենաջերմ պաշտպաններից և շեփորահարողներից մեկը եղավ նաև Վազգեն Առաջին կաթողիկոսը, որի անվանակոչության տոնը է այսօր: Ի՜նչ գեղեցիկ զուգադիպություն: Մենք Վարդանի հիշատակության առջև տոնախմբությունն է այսօր Նորին Սրբության: Վարդանանց խորհուրդով վսեմացած, խորին հարգանքով մատչելով ի Համբույր Սրբազան Աջին, ուխտենք, որ մենք կդառնանք ամենագեղեցիկ ու ամենաժրաջան մշակները մեր Առաքելական Մայր Եկեղեցվո, ի սպասավորություն ձեզ՝ սիրեցյալ ժողովուրդ հայոց»:

Հայր սուրբի ոգեշունչ քարոզից հետո կատարվում է Հայրապետական մաղթանք՝ Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի առթիվ:

Հավարտ ս. պատարագի, ժամը 18-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, սկսվում է Վարդանանց տոնակատարության հանդիսությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայրավանքի պաշտոնեությունն ու աշխատավորները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ու-

սանողությունը, բազմաթիվ հավատացյալներ և հյուրեր:

Հանդիսությանը ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Լազար Սուջյանը:

Հանդիսությունն սկսվում է խմբովին արտասանված «Հայր մեր»-ով, որից հետո հնչում է Հայկական ՍՍՀ պետական հիմնը:

Բացման խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը

«Վեհափառ Տեր,

Հարգարժան պարոն Սուջյան,

Գերաշնորհ Սրբազան Հայրեր, Մեծարգո անդամներ Գերագույն Հոգևոր Խորհրդի, հոգեշնորհ և արժանապատիվ Հայրեր, սիրելի հանդիսականներ:

Քրիստոնեության առաջին դարերին հավատքի համար իրենց կյանքը զոհող նահատակները իրենց արյունով ամրապնդեցին նորահաստատ Եկեղեցու հիմքերը:

Դ դարում քրիստոնեության հաղթանակով վերացավ նահատակության անհրաժեշտությունը:

Ե դարում, երբ Ավարայրի սուրբերի արյամբ Տղմուտի ջրերը կարմիր էին հոսում, դժվար թե արևմուտքում, Հռոմեական կայսրության մեջ, հավատային, թե մեկ օրվա ընթացքում 1098 վկաներ իրենց կյանքը զոհեցին Քրիստոսի անվան համար:

Ե դարում, երբ քրիստոնյաների հոգում մարել էր նահատակվելու տենչը, Հայոց աշխարհը բախեց դրախտի դռները: Ողջ քրիստոնեության պատմության ընթացքում ոչ մի տեղ, ոչ մի օր նման զոհաբերում տեղի չի ունեցել: Ավարայրը միակն է, երբ քրիստոնյա մի ողջ ժողովուրդ կամովին իր կուրծքը դեմ է տվել թշնամու սրին, որպեսզի փրկի իր հոգին:

Եղիշեն ասում է. «Վասն Յիսուսի, վասն հայրենեաց»: Այս երկու գաղափարները համարժեք էին դարձել այն ժամանակ: Հիսուս ասելով Վարդանանք հասկանում էին Հայրենիք, Հայրենիք ասելով՝ Հիսուս: Ահա այս հոգեբանությամբ է ապրել հայ ժողովուրդը հետավարայրյան ավելի քան 1500 տարիների ընթացքում: Ավարայրը կնքեց Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի միությունը:

Մեծ է Ավարայրի խորհուրդը: Անզուգական է եղել Ավարայրի թելադրանքը դարերի ընթացքում: Այժմեական է նաև Ավարայրը այսօր հայ ժողովրդի, հատկապես ալեկոծ Սփյուռքի հայության համար:

Այս խոհերով թույլ տվեք Ս. Վարդանանց հիշատակին նվիրված հանդիսությունը համարել բացված և հրավիրել հոգևոր ճեմարանի դասախոս բանասիրական գիտությունների թեկնածու պրն. Գևորգ Բաղդիշյանին՝ հանդես գալու օրվա բանախոսությամբ»:

Այնուհետև հոգևոր ճեմարանի դասախոս Գևորգ Բաղդիշյանը հանդես է գալիս Վարդանանց հերոսամարտին նվիրված հետևյալ բանախոսությամբ.

«Հայ ժողովրդի ազգային սրբությունները մեր ժողովրդի դարավոր սպասումներից ցամաքած աչքերի լույս ու հույս հայտնություններն են, նրա սուրբ երազանքների, մաքառումների և ինքնության հաստատման մեծագույն վկաները: Ազգը որքան ավելի խոր և առարկայորեն է ճանաչում ինքն իրեն, այնքան ավելի են պայծառանում դրանք, արդիական են դառնում և նույնիսկ՝ հրամայող, զգաստացնող: Բոլոր ժամանակների քննությանը դիմացող հազվագյուտ ընտրյալները՝ Արարատ, Արաքս, Էջմիածին, Գրիգոր Լուսավորիչ, Մեսրոպ Մաշտոց, Վարդանանք և Ղևոնդյանք..., որոնք որպես հաստատեստ, հավիտենական կանգուն սյուներ, իրենց վրա են պահում հայ ազգը: Չկա հայ ժողովուրդ, առանց ազգային սրբությունների, չկա հայ ժողովուրդ, առանց Վարդանանց և Ղևոնդյանց հիշատակի:

Դարերի քաղաքակրթության և մշակույթի, կյանքի մութ ու լույս օրերի դաժան փորձության բեռ ունի իր ուսերին հայ ժողովուրդը, որի մեծությունն ու վեհությունը նաև նրա հիշողության մեջ է, պատմության հիշողության մեջ, իր անցյալի կորուստների ու արժեքների արդար, անաչառ գնահատման մեջ: Ուրեմն, մեր ժողովրդի (ինչպես ամեն մի քաղաքակիրթ ժողովրդի) մեծագույն առաքինություններից մեկը երախտիքի զգացումն է, իր արմատների ճանաչումը: Վկան՝ 1537 տարիների անհամար սերունդների հիշողությունը Վարդանանց և Ղևոնդյանց մասին, վկան՝ մենք, օրն ու պահը, որ խորհրդավոր, սուրբ ու պատմական կամարների տակ խոնարհվում ենք նրանց հիշատակի առջև: Այս ոգեկոչումը սրբազան մի ուխտ է հայ մնալու, իբրև հայ ապրելու, իբրև հայ մեռնելու:

Վարդանանք, Ղևոնդյանք բառերի մեջ կա ամեն ինչ՝ և՛ հող հայրենի, և՛ պապենական արյան կանչի համար պատասխանատվել, և՛ խիղճ ու պատիվ, և՛ հավատ ու ժողովուրդ, և՛ Եկեղեցի՝ դեպի Աստվածային ճշմարտության ու կատարելության ձգտող

խնկաբույր ու խորախորհուրդ իր գմբեթներով:

Վարդանանց պատերազմը բռնկվել է 5-րդ դարում 451-ի մայիսի 26-ին, շաբաթ օրը, Ավարայր գյուղին հարող դաշտավայրում, Տղմուտ գետի ափին:

Հայտնի է, որ 5-րդ դարը հայ ժողովրդի վերածննդի դարաշրջանն է: Իսկ վերածննդունդը ենթադրում է կյանքի բոլոր բնագավառներում հակասությունների հաղթահարման մեծ երկունք՝ նոր լույս, նոր ճանապարհ: Ամեն մի վերածնունդ յուրօրինակ հրաշք է՝ ոգու և հոգու հրաշք, ինքնաճանաչման ու ինքնաբացահայտման հրաշք, որ մարմին է առնում արվեստի ու գրականության, բարոյական, նյութական ու մշակութային արժեքների ստեղծմամբ: Սակայն պարսիկները իրենց ռազմական, տնտեսական, քաղաքական, նվաճողական նպատակների իրականացման համար ուզում էին խլել հայ ժողովրդի ինքնահաստատումը՝ կամենալով ամեն կերպ իրենց մեջ ձուլել մեզ: Նրանք դիվանագիտորեն մշակում և քայլ առ քայլ գործադրում են հայ ժողովրդի ստրկացման իրենց ծրագիրը՝ նկատի չառնելով ամենագլխավորը՝ հայի դարավոր ընթոստ ոգին:

Վեհափառ Հայրապետը գրում է. «Հայու մասին ունեցած առաջին տպավորությունը միշտ սխալ է: Միայն երբ գիտես անոր հոգիին խոր ծալքերը հասկնալ, այն ատեն կհամոզվիս, որ ան ընդունակ է բացառիկ բարոյական թռիչքներու»:

Հայը՝ քարից հաց քամող, հայը՝ հողի, գրի ու գրչության մշակ, երկինքն ու Աստծուն պաշտող հայը դիվանագիտություն չի խաղացել և ժամանակ ու բնավորություն էլ չի ունեցել խաղալու: Թշնամին, սակայն, տարիների ընթացքում հայի նկատմամբ մշակել է իր ծրագրված, նենգ քաղաքականությունը, որով Ավարայրի տեսանելի ու անտեսանելի արմատները ձգվում են շատ ավելի հեռուները, քան 451-ի մայիսը: Ավելին, ժամանակները, ներքին ու արտաքին հանգամանքները աշխատել են գերազանցապես պարսիկների օգտին: Այսպես՝

1) դարեր շարունակ Հայաստանը եղել է կռվախնձոր ու պատերազմների թատերաբեմ՝ արևելքի ու արևմուտքի, հյուսիսի ու հարավի ռազմատենչ ցեղերի ու ժողովուրդների միջև.

2) Հայաստանում դեռևս առաքելական դարերից խմորված քրիստոնեությունը, 301-ին հռչակվում է պետական կրոն: Սա ինքնին նշանակում է, թե քրիստոնեության դեմ Սասանյանների և մազդեզական կրոնի ներկայացուցիչների կողմից դեռևս 3-րդ դարից մղված պայքարը ավելի պիտի սաստկանար.

3) 387-ին Հայաստանը բաժանվում է Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև, իսկ 428-ին վերացվում է նաև Մեծ Հայքի կիսանկախ թագավորությունը՝ վերածելով մարզպանության.

4) Հազկերտ 2-ը օգտվում է նաև մեր ժողովրդի անմիաբանությունից և խարդավանքով միմյանց դեմ դրդում հայոց նախարարներին: Դա 442-ին Հայոց երկրից խորամանկորեն հանում է հայոց զորքը և ուղարկում հոների, քուշանների դեմ պատերազմի, իսկ 447-ին, Հայաստանում անցկացրած մարդահամարով, անասելիորեն ծանրացնում հայոց աշխարհից գանձվող տուրքերը և այլն:

Բայց տոկացել է հայ ժողովուրդը, որովհետև թեև փոքր, բայց ոգու ու հոգու ժողովուրդ է, մշակութային արժեքների ստեղծմամբ ժամանակների մեջ իր մեծությունը հաստատած մեծ ժողովուրդ: Մաքառել է նա, որովհետև հավատացել է իր Աստծուն ու Լուսավորչի անմար կանթեղին, տոկացել է, քանզի լսել է իր եկեղեցիների անլռելի հույս-դողանքները, որովհետև ուներ կայուն սրբություններ՝ լեզու, հայրենի հող, հավատք: Իսկ Հազկերտ 2-րդի հավատափոխություն առաջարկող հատուկ հրովարտակը պահանջում էր. «Զոր օրէնս տէրս ձեր ունի, զնոյն և դուք կալարուք» (Եղիշե): Սա արդեն նշանակում էր ազգային ամենանվիրական զգացմունքների ու սրբությունների կորուստ: Լինել, թե չլինել: Լինել՝ որոշում է մեր ժողովուրդը և Հազկերտին տրվում է մեր ժողովրդի աննկուն կամքի և բուռն հայրենասիրության արտահայտությունը՝ մերժողական պատասխանը. «Ցայսմ հաւատոյ զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն գինչ և են դառն հարուածք... ի քէն տանջանք և ի մէնջ յանձնառութիւն. սուր քո՝ և պարանոց մեր» (Եղիշե):

Պարզ, առավել քան պարզ է ասված: Սա անվերապահորեն նշանակում է, թե քրիստոնեությունն ու աստվածպաշտությունը անհաջող մի պատվաստ չէր հայի հոգու մեջ: Քրիստոնեությունը լուսավորություն էր և քաղաքակրթության արշալույս: Ուրեմն, արյան մեջ մտածը արյան հետ էլ պիտի ելներ ու եթե ելներ... Ահա թե ինչու, Վարդանանք և Ղևոնդյանք, մեկ սիրտ, մեկ հոգի, իջնում են Ավարայր՝ Մուշկան Նյուսալավորտի հրամանատարությամբ պարսից զորքի դեմ մարտի՝ ի-

րենց հոգում մահ կամ ազատություն գոչելով: Անտարակույս, մեր պատմության այսպիսի պահերն է նկատի ունեցել Վազգեն Ա ազգընտիր Ամենայն Հայոց կաթողիկոսը, երբ դեռևս 1937-ին գրել է. «Հայ ժողովուրդը, դարավոր դժգոհ մը ու ըմբոստ մը, չի կրնար հանդուրժել ստրուկի վիճակին, կը խոյանա իր ճակատագրին դէմ, կ'ուզէ մահուան գնով իսկ պատմական հանդուգն ոստում մը կատարել՝ հոգին փրկելու համար» («Հերկ», 1937, հմր. 1): Եվ իրավ, հոգին և ոչ միայն հոգին փրկելու համար Վարդանանք և Ղևոնդյանք ընկնում են Ավարայրում՝ ապրելու և ապրեցնելու համար՝ «մահուամբ զմահն կոխեալ»:

Անկարելի է Վարդանանց պատերազմի մեջ միայն մեկ գլխավոր նպատակ, միայն մեկ գլխավոր խորհուրդ տեսնելը: Բազմանպատակ է այն ու բազմախորհուրդ՝ հայրենի հող, ազգային արժանապատվություն, կրոն, ընտանիք և այլն, և այլն: Ավարայրը միաժամանակ թե՛ պարսից և հայոց միջև արտաքին բախում էր, թե՛ հայասեր ու պարսկասեր ուժերի ներքին առճակատում: Վարդանանք և Ղևոնդյանք հայ ոգու ծառացումն են ընդդեմ չարի. «...զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռն մեր, սատակեսցուք զգօրութիւն նոցա, զի բարձրասցի կողմն ճշմարտութեան, և եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց, սուրբ մահուամբ պատերազմիս ընկալցուք խնդութեամբ սրտի, բայց միայն չարութիւնն քաջութեան վատութիւն մի խառնեսցուք» (Եղիշե). այսպես է դիմում Վարդան Մամիկոնյանը իր զինյալներին:

Իսկ Վասակյանք գործակցում-աջակցում են պարսիկներին և վրեժ լուծում հարազատ ժողովրդից: Այո, ազգի դավաճան է Վասակ Սյունին, իսկ ազգային դավաճանի մեծն ու փոքրը չկա: Բոլոր ժամանակներում Ազգի դավաճանը պատժվել է երիցս՝ նրան պատժել է թշնամին, պատժել է ժողովուրդը, պատժել է հավիտենական ժամանակը: Ազգի ու ժամանակի արձակած դատավճիռը երբեք բեկման ենթակա չէ:

Հայ ժողովրդի պատմությունը հարուստ է ինքնության ու հող-հայրենի համար մղված արդար պատերազմներով: Այդպիսի աներեղ ու արդար պատերազմ էր Վարդանանց պատերազմը:

Տարբեր են լինում հաղթանակները՝ քաղաքական, բարոյական, ռազմական, մտավոր... նվաճողական պատերազմում, սակայն, կարող է լինել սուկ ռազմական հաղթանակ, բայց ոչ երբեք՝ բարոյական: Ավարայրում հայոց բաժին է ընկնում բարոյական հաղթանակը: Ավարայրի բարոյական հաղթանակի ուժն էր, որ, ոգեկան կամք-վահան դարձած, հետագայում դիմագրավում է նաև արաբներին ու մոնղոլներին, սելջուկներին, թաթարներին ու թուրքերին:

Ամեն մի հաղթանակ, թեկուզ և բարոյական, մի նոր սկիզբ է՝ մի նոր կյանք ապրելու համար: Այդպիսին էր Ավարայրը հայերիս համար:

Մեր ժողովրդի բնավորությունը կերտվել է պատմականորեն ու պատմական հանգամանքների հոլովույթում: Անկոտրում է նրա կամքը, որովհետև արդար է: Այդ արդարությունը հաստատեց Վահան Մամիկոնյանը 484-ին, Նվարսակի դաշնագրով: Այդ դաշնագրով պարսիկ վաղեմի թշնամուց կրկին խլվում են հայոց ներքին ինքնուրույնությունը, հայ նախարարների ու հոգևոր դասի ժառանգական իրավունքները, վերացվում է հավատափոխության հարկադրանքը, ավերվում են հայոց սուրբ հողի վրա կառուցված կրակարանները, Հայոց Եկեղեցին գործում է ազատ, հայ ժողովուրդն ու նախարարները իրենք են տնօրինում իրենց ներքին գործերը: Սա թեև կատարյալ անկախություն չէր, բայց արդեն նշանակում էր հայոց ոգու, քրիստոնեության, հայոց զենքի հաղթանակ:

Փոքր ժողովուրդների ինքնահաստատման, գոյատևման համար աչքի լույսի պես թանկ են և՛ լեզուն, և՛ հավատը, և՛ ազգային մշակույթը, և՛ ընտանեկան, ամուսնական ավանդաբար սրբագործված օրենքները ու կենցաղը: Ուրեմն, միշտ պատնեշի վրա՝ ազգային սրբագործված ավանդույթներով: Այս են սովորեցնում մեզ Վարդանանց պատերազմն ու Վարդանանք՝ որպես ոգեկան մեծ արժեք:

Հազար պատարագ ու հազար լույս նրանց խնկելի հիշատակին»:

Բանախոսությունից հետո հանդես են գալիս հոգևոր ճեմարանի սաները, որոնք հոգևոր ճեմարանի շարականագիտության ու երաժշտագիտության դասախոսներ պրն. Խորեն Պալյանի ու պրն. Կոմիտաս Քեշիշյանի ղեկավարությամբ պատրաստել էին գրական-երաժշտական մի գեղեցիկ ծրագիր: Արտասանվում են հատվածներ Եղիշեի հանրահայտ երկից, Թեքեյանի «Խորհուրդ Վարդանանց» և Ալիշանի «Բլրույն Ավարայրի» բանաստեղծությունները, երգվում են Շնորհալու «Երկնաւոր Թագաւորին», «Երկնային հրաւիրակօք», «Արեգակրն արդարութեան», «Արիացեալք», «Նորահրաշ Պասկաւոր» շարականները, Գարեգին Սրվանձտյանի «Գողթնի քնար», Մ.

Եկմալյանի «Լռեց», «Ով դու քարեկամ», «Երգ մեռնող Հայրենասիրի», Կոմիտասի «Իմ հայրենեաց», «Բամ փորոտան» և «Ով Հայկազունք» երգերը:

Հանդիսության վերջում փակման գեղեցիկ ու ոգեշունչ խոսքով հանդես է գալիս Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը.

«Ամեն տարի փետրվարյան այս ցուրտ օրերին Հայաստանյայց Եկեղեցին ոգեկոչում է Վարդանանց նահատակների հիշատակը: 451 թվականից սկսած մինչև մեր օրերը, ամեն տարի, մեր ժողովուրդը հոգեկան հուզումով է անդրադառնում Վարդանանց սխրագործության և իր հայրենասիրության կրակն է վերարծարծում, դրանով իսկ հոգևոր ու մարմնապես ջերմանալու համար: Թերևս անցյալում, ինչպես և այսօր, մեզանից ոմանք մտածեն, թե քանի որ Վարդանը՝ հայոց բանակի զորավարը, զոհվեց Ավարայրի ճակատամարտում, ուրեմն հայ ժողովուրդը դրանով իսկ կորցրեց պատերազմը: Մենք բոլորս այսօր լավ գիտենք, որ Ավարայրի ճակատամարտը կորցրեցինք, բայց Վարդանանց պատերազմում հաղթեցինք: Կյանքում ամեն մի պարտություն գիտակից մարդկանց ուսուցանում է հաղթանակի ճանապարհը:

Այսօր, Վեհարանի այս շքեղ դահլիճում բոլորս հոգեկան խորությամբ, հուզումով ու երախտագետ զգացումներով ոգեկոչեցինք Վարդանանց հազար և երեսունվեց վկաների հիշատակը՝ մի անգամ ևս անդրադառնալով մեր հայրենիքի ու կրոնի հանդեպ նրանց ունեցած սիրույն և հավատին: Այս առթիվ իմ մտքում արքազան շարականագիր Սուրբ Ներսես Շնորհալու խոսքերն են կրկնվում հետևյալ բառերով. «Հրով հոգւոյն շիջուցին զբոց գկրակապաշտ պարսից», այսինքն՝ իրենց հոգու կրակով հանգցրին կրակապաշտ պարսիկների բոցը: Հրաշալի մի վերլուծություն և գեղեցիկ մի բացատրություն, Ավարայրի ամեն մի հերոսի հրաբորբ զգացումները արտահայտող: Հոգու կրակը, սիրելիներ, հավատն է, այն հավատը, որն անշեջ է, շնչող ու կենդանի, որը ներկա էր մեր պատմության ամբողջ ընթացքում իբրև լուսեղեն սյուն և առաջնորդ մեր կյանքի, մանավանդ դժնդակ օրերին:

Այս գաղափարը շատ նման է «մահուամբ զմահ կոխեաց» դարձվածքին, որ մենք ասում ենք հարուցյալ Քրիստոսի համար, որն իր մահով՝ մահվան հաղթեց: Քրիստոսի մահը ևս գերազանցապես գիտակցված մահ էր, ինչպես ոսկեդեղեկ Եղիշե պատմիչն է ասում. «Գիտակցյալ մահը անմահություն է»:

Մեր ժողովուրդը դարեր շարունակ հանձնը առավ գիտակցված մահը: Մեր ժողովրդի պատմությունը լի է բազմաթիվ նահատակներով, մարտիրոսներով և վկաներով, որոնք իրենց անմեղ արյունն են թափել գիտակցորեն՝ վասն հավատի և հայրենիքի: Հայ ժողովուրդը Վարդանանց պատերազմի օրվանից մինչև Սարդարապատի ճակատամարտի օրերը գիտակցված զոհողության ընդառաջ գնաց. ամեն անգամ, երբ մարտի դաշտ իջավ, նախնյաց հավատով և նույն համոզումներով կռվեց, երբեմն ընկճվեց, պարտվեց, բայց երբեք նրա ոգին չխամրեց, նրա հավատն ու հայրենասիրությունը չպարտվեցին:

Այսօր ևս բազում այլ միջոցներով նույն մարտը տեղի է ունենում ողջ աշխարհում, ոչ միայն մեզ համար, այլ այն բոլոր փոքր ազգերի համար, որոնք ցանկանում են վերագտնել իրենց ինքնուրույնությունը: Ուծացման, օտարացման և ձուլման դեմ պայքարը ջլատում է մեր ուժերը: Այս իսկ պատճառով հատուկ պայքար է մղվում ի սփյուռս աշխարհի ցրված մեր նոր սերունդը առաջին հերթին դաստիարակելու հայեցի ոգով, ծանոթացնելով նրան իր պատմությանը, մշակույթին և իր ավանդություններին: Այդ է պատճառը, որ ազգիս շնորհազարդ Վեհափառ Հայրապետը, մական ի ձեռին, նմանյալ Մովսեսի, ժամանակ առ ժամանակ գնում է իր հոտին այցելության ի սփյուռս աշխարհի, իբրև բարի հովիվ, մխիթարելու նրանց, կապելու նրանց սիրտը վերածաղկող և խաղաղ հայրենի հողին ու իրականությանը, մեր մշակույթին պատմությանը և հավատին: Անցավասիկ 1987 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Նորին Սրբություն հովվապետական այցը ԱՄՆ և Կանադա, նվիրված էր նաև այդպիսի ազնիվ նպատակի իրագործմանը:

Ներկայումս Սփյուռքում գտնվող մեր հոգևոր զավակների՝ Մերձավոր Արևելքում ապրող հատվածն է միայն ծանր, անորոշ և երբեմն նույնիսկ վտանգավոր վիճակներում ապրում: Մենք նրանց համար միշտ աղոթող ենք, որ խաղաղությունը վերահաստատվի այնտեղ: Բարեբախտաբար ներկայիս հայ Սփյուռքը, տնտեսական իմաստով, ընդհանրապես ապրում է բարվոք վիճակում: Բնականաբար սրանով բոլոր հարցերը չեն լուծվում: Այս անգամ նոր պայքար է սկսվում ընտանեկան ավանդական սրբությունները պահելու, հայեցի

դաստիարակություն ջամբելու նոր սերնդին և պահելու մեր ազգային բարոյական ավանդական ապրելակերպը: Ահա մի նոր ճակատամարտ ամեն ընտանիքում և ամեն մի անհատի մեջ մղվող:

Սակայն ի վերա այսր ամենայնի, մենք հավատում ենք, որ հայ ժողովուրդը դեռևս պատմության առջև իրեն վերապահված մեծ դեր ունի կատարելու: Ներկայիս իր գոյապահպանման համար Սփյուռքի հայության մղած պայքարը պետք է շարունակել Վարդանանց ճակատամարտի նշանաբանի մի փոքր փոփոխությամբ՝ «Մահ իմացյալ անմահություն է» արտահայտությունը փոխելով՝ «Կյանք իմացյալ անմահություն է» արտահայտությամբ: Գիտակցված, նպատակասլաց, զոհողությամբ առլեցուն և հայրենանվեր կյանքը մեզ առաջնորդում է դեպի անմահություն: Եթե մենք գիտակցենք մեր ժողովրդի հարուստ մշակութային արժեքները, նրա պատմությունը, և այս բոլորը կարողանանք համամարդկային մակարդակի վրա աշխարհին ներկայացնել, դա գիտակցված կյանք ու նպատակ կլինի մեզ համար ու նաև՝ օգտակար մարդկությանը:

Հավատում ենք, որ Վարդանի հոգին անմահ է և կենդանի՝ մեր ամենօրյա կյանքում: Նա է մեր նավը առաջնորդում այսօր ևս մեր առաջնորդների միջոցով, իբրև գաղափար և առաջմղիչ ուժ, հայտնվելով մերթ ընդ մերթ նրանց մեջ:

Սիրելի հանդիսականներ, այսօր Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր խորհրդի, հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության, Մայր Աթոռի պաշտոնեության և Հայ Եկեղեցու բոլոր զավակների համար ուրախության օր է: Վարդանանց հիշատակի առթիվ մենք նշում ենք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը: Ծնորհազարդ Վեհափառը այս տարի թևակոխելու է իր ութսուն տարին: Հայոց Հայրապետին Վարդանանց հիշատակի և իր անվանակոչության առթիվ, իբրև Հայ Եկեղեցու առաջնորդ Վարդան զորավար, եկեք մաղթենք երկար, քաջառողջ ու արդյունավետ կյանք:

Կեցցեն Վարդանանք»:

Հանդիսությունն ավարտվում է «Տերունական աղոթք»-ով ու Վեհափառ Հայրապետի արտասանած «Պահպանիչ»-ով:

ՍԱՌՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի փետրվարի 23-ին, ե-ռեքշաբթի օրը, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, տեղի ունեցավ վարդապետական թեզերի պաշտպանությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և հյուրեր:

Ս. Էջմիածնի երիտասարդ միաբաններ Տ. Արարատ աբղ. Գալթագճյանն ու Տ. Օշական աբղ. Գյուլգյուլյանը իրենց պատրաստած վարդապետական թեզերը նախօրոք ներկայացրել էին Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբության կարգադրությամբ կազմվել էր քննիչ հանձնախումբ, որի կազմում էին՝ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը (հանձնախմբի նախագահ), Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար պրն. Պարգև Շահբազյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր, բանասիրական գիտությունների թեկնածու պրն. Երվանդ Մելքոնյանը:

Վարդապետական թեզերի բանավոր պաշտպանությունն սկսվեց ժամը 11-ին: Հանձնաժողովի կարծիքի ընթերցումից հետո նախ իր թեզի բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ Տ. Արարատ աբղ. Գալթագճյանը և պատասխանեց տրված հարցերին:

Տ. Արարատ աբղ. Գալթագճյանի ներկայացրած աշխատանքը նվիրված էր Ասորական Եկեղեցու պատմությանը՝ «Անտիոքի Եկեղեցու պատմություն» վերնագրով: Աշխատանքը բաղկացած էր 120 մեքենագիր էջերից:

Այնուհետև, հանձնաժողովի կարծիքի ընթերցումից հետո, իր թեզի բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ Տ. Օշական աբղ. Գյուլգյուլյանը: Տ. Օշական աբեղան նախ ներկայացրեց իր ուսումնասիրության բովանդակությունը, ապա պատասխանեց տրված հարցերին:

Տ. Օշական աբղ. Գյուլգյուլյանի ներկայացրած աշխատանքը նվիրված էր Աղթամարի Աթոռի պատմությանը «Աղթամարի կաթողիկոսությունը» վերնագրով:

Աշխատանքը բաղկացած էր 62 մեքենագիր էջերից:

Երկու թեզերի պաշտպանությունից հետո հանձնաժողովը ներկայացված աշխատանքները գնահատեց ԼԱՎ:

Փետրվարի 24-ին, չորեքշաբթի օրը, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի ունեցավ մասնավոր վարդապետա-

Վարդապետական ասոյճանի տնչությունից հետո Օշականում

կան աստիճանի տվչության արարողությունը: Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը վարդապետական աստիճան շնորհեց Տ. Սասուն աբդ. Զմրուխտյանին, Տ. Արարատ աբդ. Գալթագճյանին և Տ. Օշական աբդ. Գյուլգյուլյանին:

Արարողության ավարտից հետո գերաշնորհ սրբազան հայրը հետևյալ բովանդակալից խոսքն ուղղեց նորընծա վարդապետներին.

«Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»

«Որք առիք զպատուէր քարոզել աներկիւղ զբանն կենաց յաշխարհի...»

«Դուք եք, որ պատվեր ստացաք՝ աներկյուղ կերպով քարոզելու կենաց խոսքը աշխարհում»:

Սիրելի հոգևոր եղբայրներ և հավատացյալ ժողովուրդ:

Այսօր վերստին եկել ենք Օշական, Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմին վրա կառուցված այս խնկաբույր տաճարի կամարների տակ՝ կատարելու մասնավոր վարդապետության չորս աստիճանների տվչության կարգը:

Քիչ առաջ, մեր Եկեղեցու կանոնի համաձայն, հոգեպարար աղոթքներով, սուրբ գրական ընթերցվածներով և սրտառուչ շարականների երգեցողությամբ ձեզ պարգևեցինք Ս. Հոգու շնորհները, իբրև գնահատանք ձեր ծառայությանց, կատարած հովվական աշխատանքին և քարոզչական գործունեության, այսպիսով այսօրվանից դուք դարձաք Հայ Եկեղեցու վարդապետներ:

Մանավանդ Օշականի այս սրբազան վայրում, մեր եռամեծ վարդապետի շիրմի մոտ, անհրաժեշտ է, որ անդրադառնանք վարդապետական աստիճանի կարևորության և բարձրության և փորձենք մտովի համեմատել մեզ Նրա հետ, զգալու համար մեր փոքրությունն ու տկարությունը: Այստեղ, բոլորս փոքրանում ենք ներքին անդրադարձի միջոցով և ուխտում, որ կյանքում փորձենք գեթ դույզն՝ չափով նմանվել Նրան:

Ահա, այս գիտակցությամբ վաղվանից վերսկսելու եք ձեր աշխատանքը Հայաստանյայց Եկեղեցու ծոցում, այն՝ համոզումով, որ դուք Աստուծո ձեռքում դրված գործիքներ եք՝ պատրաստ սպասարկելու մարդկության:

Ձեզանից առաջինը ծառայում է Կալիֆոռնիայի մայրաքաղաք Սակրամենտոյում, երկրորդը՝ Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսում, իսկ երրորդը՝ Կանադայի Վանկուվեր քաղաքում:

Ահավասիկ տեսնք, թե Հայաստանյայց Եկեղեցու խորանի Լուսավորչյան լույսը և Սուրբ Մեսրոպի գիրն ու լեզուն մինչև ուր ձեզ հետ ճամփորդելու են և ինչպիսի ազգային-կրոնական դաստիարակչական պարտականություն է դրված ձեր ուսերի վրա: Գիտության ջահը, որ պատեցին մեր նախնիք գրերի գյուտով և հայ գրականության ստեղծումով, այդ ջահը վերստին արծարծեցեք այս սրբազան վայրում և այն տարեք ձեզ հետ ողջ աշխարհով մեկ: Նաև հավատի այն լույսը, որ վառեցին առաքյալները Հայաստանում, դեռևս առաջին դարում, և նույն հավատի լույսը, որ նախանձախնդրությամբ մեր հավատի հայրը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, մեզ ավանդեց, որի լույսը մինչև այսօր տակավին պլպլում է Արագածի կատարին, տեսանելի միայն նրանց, որոնք հավատի աչքեր ունեն, այդ լույսը տարեք ձեզ հետ Հայաստան աշխարհից, դեպի մեր պանդուխտ հայորդիները ի սփյուռս աշխարհի:

Մեր ցանկությունն է և մաղթանքը, որ դուք, իբրև նորապսակ վարդապետներ Հայաստանյայց Եկեղեցու, լինեք խոնարհ ու համեստ կամոք, բայց հպարտ ձեր Եկեղեցիով և ժողովրդի անցյալով, բոլորանվեր սրտով ծառայելու համար Տիրոջ անդաստանում:

Այս պահին Մայր Աթոռի միաբանության, իմ և ներկա հավատացյալների անունից շնորհավորում եմ ձեզ՝ մաղթելով Աստուծո օգնականությունը ձեզի: Թող Տերը ձեզ զորավիգ կանգնի ձեր կյանքի ընթացքում և այն հովվական գավազանով, որ ստացաք, Մովսեսի նման մեր ժողովուրդը առաջնորդեցեք և մխիթարեցեք, մի օր, երբ հուսո դռները բացվեն, առաջնորդելով նրանց դեպի երկիրն ավետյաց՝ Հայաստան աշխարհ: Ձեր ձեռքի գավազանը երբեմն թող նմանվի անապատում Մովսեսի բարձրացրած պղնձյա օձով փաթաթված գավազանին, որ բժշկություն բերավ իր ժողովրդին:

Բայց մանավանդ ձեր ձեռքի գավազանը թող նմանվի Քրիստոսի խաչափայտին, որ ելավ ոչ թե չարչարանքի և տկարության նշան, այլ ընդհակառակը՝ փրկության և հաղթության նշան, ողջ մարդկության համար: Ահա այս խորհուրդները կրող ձեր ձեռքի գավազանը պիտի բանա Աստուծո օգնությամբ ձեր կյանքի գիտակցված ծառայության ուղին:

Դուք, որ ի վերուստ ստացել եք աներկյուղ կերպով քարոզելու իրավունքը կենաց Բանին, այսօրվանից ձեր առաջ պիտի բացվեն դռները այն իրագործելու։

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեանդ», ամեն։

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծա վարդապետներին՝ մաղթելով, որ բազմապատկված եռանդով այսուհետև ևս շարունակեն իրենց ազգօգուտ ու եկեղեցանվեր գործունեությունը։

Տ. ՍԱՍՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՋՄՐՈՒԽՏՅԱՆ

Ծնվել է 1954 թ. հոկտեմբերի 10-ին, Բելգիայում: Ավազանի անունը է Գրիգոր: Նախնական կրթությունը ստացել է նախ հայ Ավետարանական և ապա Վահան Թեքեյան վարժարանում: Այնուհետև ուսումը շարունակել է Հ. Բ. Ը. Մ. Հովակիմյան—Մանուկյան Ազգային երկրորդական վարժարանում:

1970 թ. ուղևորվել է Մայր Հայրենիք և ընդունվել Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1972 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնի օրը, ձեռնադրվել է սարկավագ՝ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի կողմից:

1975 թ. հոգևոր ճեմարանի հարկի տակ հաջողությամբ պաշտպանելով իր ավարտաճառը՝ «Ֆրիկի բարոյա-խրատական բանաստեղծությունները» թեմայով, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կարգադրությամբ մեկնել է Կանադայի Տորոնտո քաղաք՝ տեղի համալսարանում կատարելագործելու իր աստվածաբանական ուսումը:

Տ. Սասուն վարդապետը Տորոնտոյում իր գործոն մասնակցությունն է բերել տեղի Հայ Եկեղեցու դպրաց դասի և երիտասարդական կազմակերպության գործունեությանը՝ վարելով զանազան պատասխանատու պաշտոններ: Դասավանդել է տեղի կիրակնօրյա վարժարանում և հայկական դպրոցում:

1982 թ. Սասուն վարդապետը Տորոնտոյից տեղափոխվել է Միացյալ Նահանգների Մասաչուսետս նահանգի Բոստոն քաղաք, ուր ընդունվել է Քեմբրիջի «Եպիսկոպոսական Աստվածաբանական Համալսարան»: Հետևելով համալսարանի աստվածաբանական եռամյա դասընթացներին, այն հաջողությամբ ավարտել է 1985 թ., ստանալով «Աստվածաբանության Մագիստրոսի» աստիճան, մասնագիտանալով Ս. Գրոց և հովվական աստվածաբանության մեջ:

Համալսարանում ուսանելու տարիներին Սասուն վարդապետը ծառայել է նախ Ուոթերթաունի Ս. Հակոբ եկեղեցում և ապա՝ 1984 թ., Հեյվրհիլի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

Շարունակելով իր հասարակական-եկեղեցական գործունեությունը, Տ. Սասուն հայր սուրբը Մասաչուսետսի Ուոթերթաունն և Քեմբրիջ քաղաքներում հիմնել է «Մեսրոպ Մաշտոց» կրթօջախը՝ կազմակերպելով չափահասների համար հայոց լեզվի, ինչպես նաև հայագիտական այլ առարկաների դասընթացներ:

1985 թ. Սասուն վարդապետը, Վեհափառ Հայրապետի հրավերով, վերադարձավ հայրենիք՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որտեղ հոկտեմբերի 8-ին ԱՄՆ-ի արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի ձեռամբ օծվեց կուսակրոն քահանա:

Ձեռնադրությունից և օրինական-ավանդական քառասունքը անցկացնելուց հետո նշանակվել է ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Սակրամենտո քաղաքի հոգևոր հովիվ, ուր իր ծառայությունը շարունակում է մինչև այսօր:

Տ. ԱՐԱՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԹԱԳՃՅԱՆ

Ծնվել է 1962 թ. դեկտեմբերի 17-ին Լիբանանում: Ավազանի անունն է Հակոբ:

Նախնական կրթությունն ստացել է Բեյրութի Պուրճ-Համմուտի Սահակ-Մեսրոպյան վարժարանում, որից հետո ուսումը շարունակել է Սահակյան քոլեջում:

1977—78 ուսումնական տարում սովորել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի դպրեվանքում:

1979 թ. ընդունվել և 1984 թ. դեկտեմբերին ավարտել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը:

1983 թ. Մայր տաճարում ձեռնադրվել է սարկավագ:

1985 թ. պաշտպանել է ավարտական՝ «Հայ հին մատենագրության տպագրված տեքստերի մատենագրություն» վերնագրով («Արարատ», «Բազմավէպ», «Էջմիածին», «Հանդէս ամսօրեայ», «Հասկ», «Սիոն» ամսագրերում):

1986 թ. ապրիլի 20-ին Դամասկոսի հայոց Ս. Սարգիս եկեղեցում, ձեռամբ Հունաստանի հայոց հայրապետական պատվիրակ և Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ոսկան եպս. Գալֆաքյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Այժմ պաշտոնավարում է Դամասկոսի հայոց առաջնորդարանում:



Տ. ՕՇԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՅՈՒԼԳՅՈՒԼՅԱՆ



Ծնվել է 1960 թ. հունիսի 18-ին, Բեյրութում: Ավազանի անունն է Գևորգ: Նախնական կրթությունն ստացել է Վահան Թեքեյան ազգային վարժարանում:

1977 թ. սեպտեմբերին ընդունվել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության դրպրեվանք:

Երկու տարի ուսանելուց հետո, 1979 թ. սեպտեմբերին, ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան: Մեկ տարի անց մեկնել է Բեյրութ և որոշ ընդհատումից հետո, 1982 թ. վերադարձել Ս. Էջմիածին և շարունակել ուսումը հոգևոր ճեմարանում:

1986 թ. փետրվարի 14-ին, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1986 թ. ավարտել է հոգևոր ճեմարանը՝ ավարտական ներկայացնելով «Ստեփանոս Սյունեցու մատենագրական ժառանգության մի քանի էջեր» թեմայով:

1987 թ. փետրվարի 22-ին կուսակրոն քահանա է ձեռնադրվել, ձեռամբ Կանադայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն արքեպս. Քեշիշյանի:

Այժմ պաշտոնավարում է Կանադայի Վանկուվեր քաղաքում որպես հոգևոր հովիվ:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 14-ին, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ և ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, տեղի ունեցավ երեք բարեշնորհ սարկավագների քահանայական ձեռնադրություն:

Փետրվարի 18-ին, շաբաթ օրը, երեկոյան, Մայր տաճարի Իշման ս. սեղանի առջև, կատարվեց բարեշնորհ Ռուբեն սրկ. Հարությունյանի, Մարգար սրկ. Տերտերյանի և Լևոն սրկ. Քեսաբլյանի «Կոչումն քահանայութեան» արարողությունը՝ ըստ Հայաստանյայց Եկեղեցու Ձեռնադրության Մաշտոցի:

Արարողության խարտավիլակ Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանը վկայեց նորընծաների հոգևոր-իմացական պատրաստականության և Հայ Եկեղեցում որպես քահանա ծառայելու պատրաստակամության մասին:

«Կոչումն քահանայութեան» արարողության ավարտին բարեշնորհ սարկավագները արտասանեցին Ս. Գրիգոր Տաթևացու սահմանած Հայ Եկեղեցու «Հաւատոյ խոստովանութիւնը»՝ համաձայն Ձեռնադրության Մաշտոցի:

Փետրվարի 14-ին, կիրակի օրը, Ս. Գայանեի վանքում մատուցվեց հանդիսավոր ս. պատարագ: Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը: Պատարագի ընթացքում գերաշնորհ սրբազան հայրը, ձեռքը դնելով նորընծաների վրա, արտասանեց ձեռնադրության խորհրդավոր աղոթքը: Այնուհետև ձեռնադրող սրբազան հայրը նորընծաներին շնորհեց քահանայական փիլոն, սաղավարտ, փորուրար և շուրջառ կրելու իրավունք:

Ապա հաջորդեց օծման խորհրդավոր ու սրբազան արարողությունը: Ձեռնադրող սրբազան հայրը նորընծաների ճակատն ու ձեռքերը օծեց սրբալույս մեռոնով, վերանվանելով Ռուբեն սարկավագին՝ Տ. Կոմիտաս քահանա, Մարգար սարկավագին՝ Տ. Մակար քահանա, Լևոն սարկավագին՝ Տ. Գեղամ քահանա:

Նորընծաները ս. խորանից ժողովրդին տվեցին իրենց անդրանիկ օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Արարողության ավարտից հետո շնորհավորանքի ու խրատական խոսք ասաց ձեռնադրող սրբազան հայրը:

Հուլիսյան դեպքերի մասնակցություն ցուցաբերած Ալեքսանդրապոլի Կարմիր Բանակի հրամանատարությունը

Տ. ԿՈՄԻՏԱՍ ՔՀՆ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Ծնվել է 1957 թ. մայիսի 3-ին, Երևանում:

1964—75 թթ. սովորել է Երևանի № 46 միջնակարգ դպրոցում: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է «Հայֆիլմ» կինոստուդիային կից «Կինոդերասանի» ստուդիա, ուր մեկ տարի սովորելուց հետո զորակոչվել է սովետական բանակ:

1976—78 թթ. ծառայել է սովետական բանակում:

Ծառայությունն ավարտելուց հետո շարունակել է դասընթացը կինոստուդիայում, որն ավարտել է 1980 թ.-ին:

1982 թ. ձեռնադրվել է դպիր և ծառայության անցել Արարատյան հայրապետական թեմում:

1984 թ. փետրվարի 4-ին, ձեռամբ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1984—1987 թթ. սովորել է հոգևոր ճեմարանում:

Ներկայումս ծառայում է Մայր տաճարում որպես ավագ դասապետ:



Տ. ՄԱԿԱՐ ՔՀՆ. ՏԵՐՏԵՐՅԱՆ

Ծնվել է 1962 թ. մայիսի 12-ին, Էջմիածին քաղաքում: 1969—1980 թթ. սովորել է Էջմիածնի Երվանդ Օտյանի անվան № 7 միջնակարգ դպրոցում: 1980 թ. սեպտեմբեր ամսին ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան: 1984 թ. դեկտեմբերի 25-ին գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի ձեռամբ ձեռնադրվել է սարկավագ: 1985 թ. ավարտել է հոգևոր ճեմարանը: 1986 թ. մարտին ավարտական է պաշտպանել «Ծռազատիկի առաջացման պատճառները և նրա արձագանքները հայ մատենագրության մեջ» թեմայով:

Հոգևոր ճեմարանը ավարտելուց հետո նշանակվել է Մայր տաճարին կից թանգարանում որպես գանձապահ: Այնուհետև ծառայել է Ս. Խորվիրապի վանքում որպես սարկավագ:

Այժմ ծառայում է Մայր տաճարում որպես ծիսակատար քահանա:

Տ. ԳԵՂԱՄ ՔՀՆ. ՔԵՍԱԲԼՅԱՆ

Ծնվել է 1955 թ. մարտի 11-ին, Էջմիածին քաղաքում:



1962—1972 թթ. սովորել է Էջմիածին քաղաքի № 1 միջնակարգ դպրոցում:

1973 թ. ընդունվել է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան Գեղարվեստի ուսումնարան:

1974 թ. զորակոչվել է սովետական բանակ: Ծառայությունն ավարտելուց հետո շարունակել է ուսումը վերոհիշյալ ուսումնարանում:

1979 թ. ավարտել է ուսումնարանը և նշանակվել Էջմիածին քաղաքի № 8 միջնակարգ դպրոցում որպես գեղանկարչության ու գծագրության ուսուցիչ:

Այնուհետև հոգևոր ճեմարանում երկու տարի հաճախել է քահանայից դասընթացներին, որպես ազատ ունկնդիր:

1984 թ. ձեռնադրվել է սարկավագ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի ձեռամբ:

1988 թ. սկսած ծառայել է Ս. Կայանե վանքում իբրև սարկավագ:

Այժմ աշխատանքի է նշանակված Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցում որպես ծիսակատար քահանա:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծա քահանաներին, մաղթելով, որ նրանք անշահախնդիր կերպով իրենց ուժերն ի սպաս դնեն՝ ի պետս և ի ծառայություն հայ հավատացյալ ժողովրդի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԻԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՅԹ

Վեհափառ Հայրապետի երկարամյա հետևողական աշխատանքի շնորհիվ այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ծաղկման ու վերազարթոնքի մի նոր շրջան է ապրում: Այս վերազարթոնքի ու Ս. Էջմիածնի կենսունակության վկաներն են Մայր Աթոռի երիտասարդ միաբանները, որոնք պատրաստվում են իրենց ուսերին կրելու ազգին ու Եկեղեցուն ծառայելու պարտականությունը: Սակայն այսօր Մայր Աթոռի երիտասարդ միաբանները Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ հոգևոր ծառայության են նշանակված տարբեր երկրներում և կամ իրենց կրթությունն են շարունակում քույր Եկեղեցիների ուսումնական բարձրագույն հաստատություններում: Գործի բերումով նրանցից շատերը երբեմն երկար ժամանակով հնարավորություն չեն ունենում այցելել Մայր Աթոռ, հանդիպել իրենց միաբան եղբայրներին, խոսել ձեռքբերումների ու մտահոգությունների մասին:

Ահա այս պատճառով, ինչպես նաև երիտասարդ միաբանների միջև եղբայրական սերտ կապ ստեղծելու նպատակով, ընթացիկ տարվա փետրվարի 16-ից 22-ը Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով հայ հավատքի ու ազգային ոգու կենտրոն Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Մայր Աթոռի երիտասարդ միաբանների առաջին հավաքույթը:

Հավաքույթին մասնակցում էին Մայր Հայրենիքում ու արտասահմանյան տարբեր երկրներում պաշտոնավարող և ուսանող Մայր Աթոռի հետևյալ երիտասարդ միաբանները.

1. Հայկազուն ծայրագույն վրդ. Նաջարյան (ԱՄՆ):
2. Հովնան վրդ. Տերտերյան (Կանադա):
3. Զատիկ վրդ. Ավետիքյան (Ֆրանսիա):
4. Արամայիս վրդ. Ծլուկյան (Ռումինիա):
5. Ասողիկ վրդ. Արիստակեսյան (Հայաստան):
6. Պարգև վրդ. Մարտիրոսյան (Հայաստան):
7. Սասուն վրդ. Զմրուխտյան (ԱՄՆ):
8. Արարատ վրդ. Գալթագճյան (Սիրիա):
9. Օշական վրդ. Գյուլգյուլյան (Կանադա):
10. Աբել աբղ. Օղլուգյան (Ավստրիա):
11. Ծնորհք աբղ. Բաղդասարյան (Անգլիա):
12. Եզրաս աբղ. Ներսիսյան (Լենինգրադ):
13. Սեպուհ աբղ. Զուլջյան (Հայաստան):
14. Նավասարդ աբղ. Կճոյան (Հայաստան):
15. Սերովբե աբղ. Իսահակյան (Հայաստան):
16. Աբրահամ աբղ. Մկրտչյան (Հայաստան):

Հավաքույթի պաշտոնական բացումը և առաջին նիստը գումարվեց փետրվարի 16-ին, առավոտյան ժամը 11-ին, Վեհարանում նախագահությամբ Ամենայն Հայոց Հայրապետի:

Միաբաններին ողջունեց և բարի գալուստ մաղթեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը.

«Ինչպես անցյալում, այսօր ևս մեր ազգային կյանքում այս ու այնտեղ հաճախ ենք լսում մտահոգ մարդկանց կողմից իբրև կիսամեղադրանք ասված հետևյալ խոսքերը, թե Հայ Եկեղեցին տակավին կարիքն ունի մեծ թվով գիտակից ու զարգացած հոգևորականների, և այս ուղղությամբ պետք եղած ուշադրությունն ու աշ-

խատանքը չի կատարվում մեր Եկեղեցու ղեկավար անձանց կողմից, ինչպես որ հարկն է:

Այսօր, երբ Ս. Էջմիածնի դարավոր կամարների տակ ենք հավաքվել Հայաստանյայց Եկեղեցուն ծառայելու սիրով թրծված մի բուռ երիտասարդ հոգևոր հայրեր, որոնք անցյալ տասը-տասնհինգ տարիների ընթացքում իրենց ուսումն ստացել են մեր հոգևոր ճեմարանի հարկի տակ և իրրև կուսակրոն վեղարավորներ ընդունել իրենց կոչման՝ Հայ Եկեղեցուն ծառայելու սրբազան գործի գիտակցությամբ, բնականաբար մեր սրտերը ուրախությամբ և խնդությամբ են լցվում և մխիթարվում ենք այն մտածումով, որ ահավասիկ գիտակից մի բուռ երիտասարդներ գալիս են խտացնելու մեր շարքերը և հավանաբար մի օր մենք այլևս ափսոսանքով չենք նայելու ետ՝ ասելով «հունձք բազում են և մշակք սակաւք»:

Եթե Հայ Եկեղեցու կյանքի վերջին հարյուրամյակի պատմությունը քննենք, կտեսնենք, թե ինչպիսի ահավոր դժվար վիճակներից է նա անցել: Հատկապես Օսմանյան կայսրության տիրակալության շրջանում և Մեծ Եղեռնի օրերին երկու միլիոն անմեղ հայ զոհերի շարքում անհնա կերպով կոտորվեցին նաև հազարավոր Հայ Եկեղեցու սպասավորներ: Նրանք բոլորը մարտիրոսության պսակին արժանացան իրենց հավատքի համար չարաչար բռնադատվելով և սպանվելով:

Եղեռնը Հայաստանյայց Եկեղեցու հիմքերին ամենամահացու հարվածը հասցրեց, Արևմտյան Հայաստանում գործող շուրջ երկու հազար հաշվվող եկեղեցիներ, վանքեր ու սրբավայրեր անշքացան, ավելի քան երեք հազար հայ հոգևոր սպասավորներ կոտորվեցին:

Քսաներորդ դարասկզբում Արևելյան Հայաստանում դրությունը ավելի հուսադրիչ չէր, թեև Մայր Աթոռում կար մի սերունդ Արևմտյան Եվրոպայում բարձրագույն կրթություն ստացած և պատրաստ վերակերտումի ծառայության՝ նոր ավյուն ներարկելու համար Հայց. Եկեղեցուն, սակայն նրանք ևս հնարավորությունը չունեցան՝ զոհ դառնալով ինչ-ինչ քաղաքական վերիվայրումների: Այս գիտակից սերունդն էր, որ երջանկահիշատակ Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսի կողքին կանգնած 1918 թվականի մայիսին Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի մարտերում ոգի ներշնչեց մեր ժողովրդին:

Ընդամենը մի բուռ հոգևորականներ էին կենդանի մնացել, հայ ժողովրդի կյանքի վերիվայրումներից հետո, գիտակից իրենց կոչման և առաքելության, որոնց վրա էր ծանրանում բարոյական պարտքը վերակենդանացնելու մահացու կերպով վիրավոր Հայաստանյայց Եկեղեցին:

1945 թվականին Ս. Էջմիածնում գումարված Ազգային-Եկեղեցական Ժողովը Գևորգ Զ-ին ընտրեց Ամենայն Հայոց կաթողիկոս: Երջանկահիշատակ Գևորգ Զ կաթողիկոսի անխոնջ ջանքերին իրրև հետևանք վերաբացվեցին Էջմիածնում հոգևոր ճեմարանը, բազմաթիվ հայ եկեղեցիներ, վերահրատարակվել սկսեց «Էջմիածին» ամսագիրը իրրև շարունակություն «Արարատ» ամսագրի և ստեղծվեց մի նոր միաբանություն:

Աստուծո նախախնամական աջի հովանավորությամբ 1955 թվականին Լուսավորչի գահ բարձրացավ առաքելաշավիղ Վազգեն Ա Հայրապետը, որն իր ավելի քան երեսնամյա տքնաջան աշխատանքով մի նոր էջ բացեց մեր Եկեղեցու կյանքում, եկեղեցականների մի նոր սերունդ ընձյուղեց Հայց. Եկեղեցու ծոցում և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը վերաշինության ու ծաղկման մի նոր շրջան ապրեց:

Սիրելի երիտասարդ հոգևոր եղբայրներ, դուք նոր տասնամյակների սերունդների վերջին հունձքն եք: Այսօր հավաքված Մայր աթոռի դարավոր կամարների ներքո՝ ունենալու եք ձեր միաբանական նիստերը: Ի սրտե ձեզ ողջունում եմ՝ և ձեր ազնիվ ծրագրերին մաղթում ամենայն հաջողություն:

Այս առթիվ, ուզում եմ մի քանի խոսքով անդրադառնալ Հայաստանյայց Եկեղեցու ներկա վիճակին: Արդյո՞ք բավարար թվով եկեղեցականներ ունենալը պիտի լուծի մեր առաջ դրված եկեղեցական-կրոնական բոլոր տագնապալի հարցերը: Բնականաբար ինչպես որևէ մի կազմակերպություն, առավել ևս Հայաստանյայց Եկեղեցին անհետաձգելիորեն կարիքն ունի մի կանոնագրության (դուք գիտեք, որ այս հարցով մտահոգվել է իր գահակալության առաջին իսկ օրվանից Վազգեն Ա կաթողիկոսը), որը լինելու է Եկեղեցու ամբողջության մեջ, ընդհանրական Աթոռների տեղը ճշտող հիմք, ինչպես նաև ամեն մեկի դերը բնորոշող:

Ահա այս ուղղությամբ վերջին տասնամյակներում և ի մասնավորի անցնող յոթը տարիների ընթացքում Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ ու հովանավորությամբ կարևոր աշխատանք տարվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ հատուկ մի հանձնախմբի կողմից:

Վերոհիշյալ կանոնադրության նախագծի

կազմության զուգահեռ Մայր Աթոռը բարգավաճեց, շինարարական նոր ծրագրեր իրագործվեցին, հոգևոր ճեմարանը իր հունձքը տարվե տարի տվեց, միջեկեղեցական՝ էկումենիկ ասպարեզում Հայց. Եկեղեցին իր գործունեության շրջանակները առավել ընդարձակեց, աշխարհի խաղաղության և զինաթափության ազնիվ գործի իրականացման ասպարեզում իր ձայնը բարձր հնչեցրեց, մեր գործող եկեղեցիների թիվը ավելացավ և հայ ժողովրդի հետ նաև Հայց. Եկեղեցին կարծեք մտավ բնական կյանքի ուղու մեջ։

Սակայն վերջին երեսուն տարիների ընթացքում Մայր Աթոռի և Կիլիկյան Աթոռի միջև ստեղծված հարաբերությունների սրվածությունը, դժբախտաբար, հնարավոր չեղավ վերացնել, որովհետև Կիլիկյան Աթոռը թեմեր և հովվություններ գրավելու իր նկրտումները չդադարեցրեց։ Ծանոթ է բոլորիս Կիլիկյան Աթոռի ձգտումը արտասահմանի հայությունը հոգևորապես անջատելու Ս. Էջմիածնի Մայր Աթոռի իշխանությունից։ Բազմիցս և՝ երջանկահիշատակ Խորեն Ա, և՝ Գարեգին Բ Կիլիկիո կաթողիկոսները բացահայտ կերպով հայտարարել են օտար թերթերի թղթակիցներին, որ Սփյուռքի հայության հոգևոր ղեկավարները իրենք են։ Բնականաբար, այս ոգին միայն ցավ է պատճառում մեզ բոլորիս, հայրենի իրականությունից և 17-դարյա պատմություն ունեցող Ս. Էջմիածնից սփյուռքահայությունը բաժանելու փորձերը ծանրորեն ցավալի երևույթներ են։

Սիրելի միաբանակից եղբայրներ։ Հակառակ մեր առջև դրված այս բոլոր հարցերին, մենք պետք է լավատես լինենք, մեր սրտերը պետք է լցված լինեն լավատեսության, եղբայրական ջերմ զգացումներով, որովհետև մենք ամուր կերպով կանգնած ենք մեր հայրենի սրբազան հողի վրա սրբագործված մեր նախնյաց արյունով։ Պետք է լավատես լինենք, որ շուրջ 1700 տարվա պատմություն, մշակույթ ու ավանդություն ունեցող այս սրբազան հաստատության զավակներն ենք։ Այն հաստատության, որ սրբագործվեց մեր հավատի հայր Ս. Գրիգոր Լուսավորչի աղոթքներով, և ուր իջավ ինքը՝ Աստվածորդին Հիսուս Միածինը։ Այս սուրբ հաստատությունը մեր Եկեղեցու սիրտն է և մեր հավատի օրրանը։

Ամուր կանգնած սույն սրբազան կոմանների վրա, իբրև զինվորյալ միաբաններ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շարունակենք մեր սրբազան առաքելությունը՝ քրիստոնյաներ, ազգանվեր և մարդասիրական։

Սույն մտածումներով վերջացնում եմ իմ խոսքերը ձեզ, սիրելիներ, բոլորիդ մաղթելով հաջողություն ձեր սրբազան կոչման մեջ և բարեհաջող ընթացք ձեր նիստերին։

«Բարի առաքեցյալ»։

Ապա Մայր Աթոռի երիտասարդ միաբանների անունից շնորհակալական խոսքով հանդես եկավ հոգեշնորհ Տ. Հովնան վրդ. Տերտերյանը.

«Վեհափառ Տեր,

Հանուն Ս. Էջմիածնի երիտասարդ միաբաններու հավաքին, առաջին իսկ առիթով պարտք կզգամ Ձերդ Սրբության մատուցելու որդիական մեր մաքուր սերն ու երախտիքը, որ Ձեր նախաձեռնությամբ ու հայրական հոգատարության ներքո պատմական այս օրը ու հաջորդական օրերու հանդիպումը կարելի դարձավ ի սեր Մայր Հայրենիքի ու Ս. Էջմիածնի, բայց մանավանդ Ձեզի համար՝ զգալու հոգեկան բավարարությունն ու մխիթարությունը Ձեր զավակներու ներկայության, որոնք առաջին անգամ ըլլալով բոլորեքյան հավաքված են այսօր այստեղ Ձեր շունչի տակ։

1986 տարեշրջանի նոյեմբեր ամսին, Ս. Էջմիածին իմ այցելության ընթացքին, Ձերդ Սրբության ներկայացուցչի նման միաբանական հավաքի մը անհրաժեշտությունը և ապա Թորոնթո վերադարձիս ճանապարհին նամակով մը կարդարացնեի իմ առաջարկը։ Շատ պարզորեն արտահայտելու համար իմ առաջարկն ու պատճառաբանությունները, ամփոփ կուզեմ ըսել, որ նման միաբանական հավաքույթ մը, հանդիպում մը առաջին իսկ առիթով անհրաժեշտություն է միաբանական կյանքի մը նեռս, որը անպայմանորեն կունենա ու կստեղծե դրական մթնոլորտ, կապահովե ու կամրապնդե կապն ու փոխհարաբերությունը միաբաններու միջև, կօգնե, որ միաբանները իրար հանդեպ ունենան եղբայրական սեր ու իրարհասկացողություն, համագործակցություն, և այս բոլորը ի սեր և հօգուտ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի։

Սիրելի միաբանակից եղբայրներ, իմ մաղթանքն է, որ մենք այս ժողովը կազմակերպենք բարի տրամադրությամբ, բայց մանավանդ առաջնորդվենք Ս. Ավետարանի ոգով։ Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ կազմակերպված այս ժողովը ունի ծրագիր մը, որուն պետք է հետևինք ընթանդրությամբ ու կարգապահությամբ։ Այլ խոսքով, ժողովի կանոնավորությունը պիտի ցույց տա մեր սերն ու հարգանքը Վեհափառ Հայրապետի անձի նկատմամբ և մեր նվիրումի ու գիտակցության չափը հանդեպ Ս. Էջմիածնի ու անոր առաքելու-

թյան: Սույն ժողովը պետք է քննարկե միաբանական մտահոգություններ, որոնք առավելաբար առնչություն ունին մեր եկեղեցական կյանքին հետ: Այսպես, օրինակ, քննարկում որոշակի երևույթներու, որոնք մաս կկազմեն հովիվի մը կյանքին ու անոր մտահոգություններուն, հաղորդության մատուցման նոր եղանակի որդեգրում, կուսակրոն քահանայություն, հայ հոգևորականներու մասնակցությունը միջեկեղեցական ժողովներուն, Անթիլիաս-Էջմիածին փոխհարաբերությունը և այլն: Բայց կուզենք այստեղ հստակեցնել, որ մեր կողմե կատարվածը միայն քննարկումը պիտի ըլլա նման հարցերու, որոնք ի պահանջել հարկի պետք է ներկայացնել պաշտոնապես Վեհափառ Հայրապետի ուշադրությանը:

Սույն ժողովը պետք է լավ մտածե ստեղծելու համար դրվածք մը, որով կարելի ըլլա ապահովել կապը Մայր Աթոռի հետ ընդհանրապես: Այս ուղղությամբ իմ մտքի մեջ ունեցած ծրագիրը հետևյալն է, որ Մայր Աթոռեն մեկը պաշտոն առնե ամսական արագ տեղեկություններ պատրաստելու և հղելու Մայր Աթոռի այն միաբաններուն, որոնք կնստանեն արտասահմանի մեջ: Իսկ կարևոր միջոցառումներու պարագային տվյալ անձը հեռագրով տեղեկացնե արտասահմանի մեջ ծառայող միաբաններեն մեկուն, որն իր հերթին պատճենը հղե բոլորին:

Սույն ժողովը լավագույն առիթն է, որ մենք լրջորեն մտածենք ձեռնարկելու հոգևոր գրականության հրատարակչական աշխատանքին՝ միշտ Մայր Աթոռին հովանավորությանը ներքո և հրամանավ Նորին Սրբությանն:

Սույն ժողովին կհաջորդեն տեղական բնույթի ժողովներ առանձին աշխարհագրական մասերու մեջ, հատկապես Ամերիկայի ու Եվրոպայի մեջ: Իսկ երկու տարին մեկ անգամ գումարվին միաբանական ժողովներ Մայր Աթոռի մեջ Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ ու նախագահությամբ:

Սույն ժողովը պետք է ունենա ատենապետ մը ու փոխատենապետ մը, ատենադպիր մը ու փոխատենադպիր մը, որոնք հանձն առնեն ժողովներու կանոնավորությանց ու արձանագրությանց պարտականությունները: Այս ձևով կապահովենք նաև ժողովներու հաղորդագրությունը և՛ հայերեն, և՛ անգլերեն լեզվով՝ արտասահմանի թերթերուն համար:

Սիրելի միաբանակից եղբայրներ, սույն ժողովը իր տեսակին մեջ առաջինն է, և այս ժողովը բոլորիս պիտի ընձեռե նորանոր փորձառություններ: Անկասկածորեն այս հանդիպումը դուռն է առուլել միության մեր միջև և սկիզբը առավել արդյունավետ համագործակցության: Այս հանդիպումը բոլորիս համար ուխտի սրբազան պահ մը թող հանդիսանա, մեր մեջ վերանորոգելու համար ամբողջական նվիրումը Ս. Էջմիածնին, հավատարմությունը դեպի Մայր Հայրենիքը և հնազանդությունը Վեհափառ Հայրապետի հրահանգներուն:

Վեհափառ Տեր, այս պահը Ձեզի համար, վստահ ենք, գերագույն երջանկության պահն է, երբ շրջապատված Ձեր զավակներով, կտեսնեք հունձքը Ձեր աշխատանքներուն: Մեր աղոթքն է առ Աստված, որ Ձեզ պարգևե կենաց երկար ու քաջառողջ տարիներ, որպեսզի Ձեր Հայրապետական օրհնության ներքո աճի ու բարեզարդվի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և համայն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին»:

Վերջում իր օրհնության, գնահատանքի ու մաղթանքի խոսքն ասաց Վեհափառ Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Երիտասարդ միաբանների հավաքույթն է այս: Ես իմ հայրական ողջույնն ու օրհնությունն եմ բերում ձեզ բոլորիդ:

Հոգեկան մեծ մխիթարություն է ինձ համար այս հանդիպումը: Երբ, Աստուծո ողորմությամբ, տկար ուժերով Լուսավորչի Աթոռին բարձրացա, իմ հիմնական մտահոգություններից մեկն էր, թե ես ի՞նչ պիտի կարողանամ իրագործել: Նույնիսկ քիչ հուսահատ վիճակի մեջ էի: Եվ իմ մտահոգություններից մեկն էր, թե արդյոք իմ շրջանին նոր սերունդներ պիտի կարողանա՞մ պատրաստել: Մտածում էի, որ եթե իմ կաթողիկոսության շրջանին չկարողանամ նոր սերունդներ պատրաստել, արժանավոր մարդիկ, հավատարիմ իրենց կոչումին, ի զուր տեղը կաթողիկոս ընտրված պիտի լինեի: Այս մտահոգությունը ինձ տեվապես հետապնդել է մինչև այսօր: Եվ մինչև այսօր էլ տակավին բացարձակ վստահություն չունեմ, որ ես լրիվ հաջողել եմ այս գործի մեջ: Սրանով հոռետեսական շեշտ չեմ ուզում դնել, չեմ ստորագնահատում ձեռք բերվածը, սակայն այն հեռու է բավարար լինելուց:

Մեր Եկեղեցին իր փառավոր անցյալով իբրև քրիստոնեության այուն արևելքի սահմանների վրա, որ բազում անգամներ նահատակներ է տվել, արժանի է ավելի լավ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԻԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

ճակատագիր ունենալու և ավելի լուսավոր ապագա: Այդ ավելի լավ ապագան ապահովելու համար, առաջին հերթին պետք ունենք իսկապես զինվորյալ հոգևորականների, որոնք ամեն բանից առաջ գիտակցությունը ունենան իրենց հոգևոր առաքելության կարևորության մեր ժողովրդի կյանքում:

Ահա այսօր ես ապրում եմ մխիթարության զգացում ձեր ներկայության: Տեսնում եմ, որ ինչ-որ ճանապարհ բացվեց արդեն մեր առաջ: Վերջին 10—20 տարիներին կարողացանք կարևոր թվով հոգևոր մշակներ, Եկեղեցու սպասավորներ պատրաստել: Նրանցից ոմանք արդեն եպիսկոպոսական աստիճանին են հասել: Դուք, ներկա գտնվողներդ, վերջին շրջանի մեր միաբաններն եք: Սրտանց ողջունում եմ այս հավաքույթը, որի նախաձեռնողը եղավ Հովնան վարդապետը: Ես մի քիչ տարակուսում էի, թե արդյոք պիտի կարողանա՞ք բոլորդ գալ վերանորոգելու ձեր ուխտը և հավատարմությունը: Բայց անավասիկ հավաքույթը հնարավոր եղավ և գրեթե բոլորդ էլ ներկա եք:

Այսօր ես ուզում եմ մի հիմնական հարցի շուրջ խոսել: Դուք բոլորդ մեր Եկեղեցու և մեր ժողովրդի զավակներն եք, դուք բոլորդ հոգևոր ճեմարանն եք ավարտել, դուք բոլորդ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններն եք: Ձեզանից մոտավորապես կեսը աշխատում եք արտասահմանում, մյուս կեսը՝ այստեղ, և բոլորդ էլ, բացի հոգևոր ճեմարանում ուսանելուց, շարունակել եք ձեր ուսումը այս կամ այն չափով քույր Եկեղեցիների կրթական հաստատություններում: Ձեզանից ոմանք ավարտել են և արդեն դիպլոմներ ունեն, ոմանք Անգլիայից, Գերմանիայից, ոմանք Ֆրանսիայից, Աթենքից կամ Ջագորսկից, Լենինգրադից, Ամերիկայից: Բնականաբար ձեզանից ամեն մեկը, որ ուսանել է քույր Եկեղեցիների հաստատությանց մեջ, անպայման կրում է այդ Եկեղեցիների ազդեցությունը՝ ուսմունքի, մտածելակերպի և հոգևոր մշակույթի առումով: Ոմանք Օրթոդոքս Եկեղեցու, ուրիշներ Կաթոլիկ Եկեղեցու կամ Անգլիկան և Բողոքական Եկեղեցիների: Այս Եկեղեցիների և հետևաբար նրանց կրթական հաստատությունների ուսումնական դրվածքի միջև տարբերություններ կան: Հիմա դուք ինչպե՞ս պիտի հաշտեցնեք այդ տարբերությունները մեր Եկեղեցու ծոցում: Եթե ամեն մեկը իր սովորածի ճանապարհով գնա, այստեղ իրար չենք կարող հասկանալ: Մեկը՝ Օրթոդոքս, մեկը՝ Կաթոլիկ, մեկը՝ Բողոքական կամ Անգլիկան: Այս բոլորը իրար հետ ամբողջապես չեն ներդաշնակվում: Սա մեկ հարց:

Երկրորդ հարցը. ոչ միայն այս բոլորը իրար հետ չեն ներդաշնակվում, այլ նաև դրանք մեզ հետ չեն ներդաշնակվում: Մենք ոչ Օրթոդոքս ենք, ոչ Կաթոլիկ և ոչ էլ Բողոքական կամ Անգլիկան: Ինչպիսի՞ ուղղություն պիտի որդեգրենք մեր Եկեղեցու կյանքում: Սա շատ կարևոր հարց է: Եվ հիմա ժամանակն է, որ մտածենք այդ մասին: Ոչ միայն աստվածաբանական մտածելակերպի տարբերություններ կան, այլ նաև փիլիսոփայական և հոգեբանական: Նույնիսկ նույն Եկեղեցու ծոցում կան մտայնությանց տարբերություններ: Օրինակ՝ ֆրանսիացի, անգլիացի և գերմանացի կաթոլիկների միջև կան տարբերություններ փիլիսոփայական, աշխարհայացքի և հոգեբանական տեսակետներից: Դա համապատասխան ժողովուրդների նկարագրից և իմացական կազմավորումից ու ավանդություններից կախում ունի: Ինչպես հայտնի է փիլիսոփայության մեջ՝ ֆրանսիացիները ավելի ռացիոնալիստ են: Ֆրանսիացիները առհասարակ ազգովին ռացիոնալիստ մտածողության գծի վրա են գտնվում: Գերմանացիները իդեալիստական մտածողության ուղղություն ունեն, իսկ անգլոսաքսոնները՝ գործնապաշտ կամ պրագմատիստ մտածողության: Սրանք հիմնական երեք ուղղություններն են Եվրոպական ժողովուրդների՝ ռացիոնալիստական, իդեալիստական և պրագմատիստական: Դուք այս բոլորին բնականաբար ծանոթանում եք, արտասահմանցի ուսանողներդ: Արևելքի Օրթոդոքսները հեռու են այս երեք հոսանքներից էլ: Օրթոդոքս մտածելակերպը ոչ ռացիոնալիստ է, ոչ իդեալիստ և ոչ էլ պրագմատիստ, փիլիսոփայական իմաստով: Դրանք եվրոպական ժողովուրդների իմացական կառուցվածքի հետ կապ ունեն: Օրթոդոքս Եկեղեցիները բոլորովին հեռու են այդ բոլորից իբրև Եկեղեցի: Անավասիկ, նաև փիլիսոփայական ու աշխարհայացքի հարցերի մեջ, այնքան հիմնական տարբերություններ կան արտասահմանյան կրթական հաստատությունների միջև: Այս բոլորից հետո կրկին պիտի վերադառնամ նույն հարցին՝ մենք ի՞նչ դիրք պիտի որդեգրենք, ո՞ր ուղղության պիտի հետևենք, ո՞րը պիտի ընդունենք, ո՞րը մերժենք:

Անշուշտ, այս հարցերի շուրջ կարելի է երկար խորհրդածել: Ես անձնապես այս առիթով ուզում եմ հայտնել իմ մտածումը, թե մեր երիտասարդ միաբանները պետք

է ծանոթանան այս բոլոր ուղղություններին էլ, որովհետև այդ բոլորը ծառայում են ընդհանուր զարգացման և իմացական հորիզոնի ընդարձակմանը: Լավ է, որ դուք բոլոր ուղղությունների մասին էլ գաղափար ունենաք, որոշ չափով ազդվեք էլ նրանցից: Բայց հետո վերադառնաք մեր Եկեղեցուն, զինված նրանց գիտելիքներով, նրանց ուսմունքով, բայց այդ զենքերը օգտագործեք մեր Եկեղեցու շինության համար: Ոչ թե այդ տեսությունները աղյուսների նման օգտագործեք վերակառուցելու համար մեր Եկեղեցին:

Հայ հոգևորականի առաքելությունն է ծառայել մեր հավատացյալ ժողովրդին: Աստված մեզ այս հատվածն է տվել՝ հայ ժողովրդի զավակները, և այդ սահմաններում մենք մեր պարտքը պիտի կատարենք: Երբեմն ես մտածում եմ մտնել արտասահմանում աշխատողներիդ դրության մեջ և հասկանամ ձեր վիճակը, զգամ այն ազդեցությունները, որոնց դուք ենթարկվում եք անխուսափելի կերպով: Արտասահմանում շացուցիչ շատ բաներ կան, կրոնական և այլ իմաստներով՝ փառահեղ տաճարներ, մտավորական բարձր մակարդակ, հարուստ գրականություն, կյանքի շռայլ պայմաններ և այլն: Եթե մեկը Հռոմ այցելի՝ կշշմի: Կարծես կկքես այդ շքեղ ճանրության տակ: Դուք պիտի կարողանա՞ք չեզոքացնել այդ ազդեցությունները և համադրել դրանք ներդաշնակորեն մեր Մայր Եկեղեցու կյանքում:

Մեր Եկեղեցին 1700 տարվա անկրկնելի հուշարձան է, կարիք չունի վերափոխման կամ այս կամ այն ուղղության հարելու: Մեր Եկեղեցին իր անհատականությունը պիտի պահի, նրա արժանիքը դրա մեջ է և մեր առաքելությունն է՝ այն պահպանել իր վավերականության մեջ: Մենք, զինվելով Եվրոպական քույր Եկեղեցիների գիտական մեթոդներով, ծանոթանալով նրանց աստվածաբանական և փիլիսոփայական տեսությանց, պիտի վերադառնանք մեր տունը՝ զորացնելու մեր Մայր Եկեղեցու հիմքերը, որը կարիք ունի տնապես զարգացման, զորացման և ամրապնդման: Ձեր առջև դրված հարցը այդ է: Զգույշ եղեք: Պատասխանատու եք Աստուծո և պատմության առջև:

Ըստ նախօրոք կազմված ծրագրի, յուրաքանչյուր նիստի ավարտից հետո կազմվեց արձանագրություն, ուր նշված են տրվյալ նիստի արդյունքները ու որոշումները: Սույն արձանագրությունները վերջում ներկայացվեցին Վեհափառ Հայրապետի ուշադրությանը:

Ստորև հրատարակում ենք այդ արձանագրությունները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԻԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒԹԻՆ 1988 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի փետրվարի 17-ին, առավոտյան ժամը 10-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, տեղի ունեցավ Մայր Աթոռի երիտասարդ միաբանների երկրորդ նիստը:

Նիստի ատենավարն էր Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը, ատենադպիրը՝ հոգեշնորհ Տ. Շնորհք աբղ. Բաղդասարյանը: Նիստին ներկա էր նաև Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Նիստն սկսվեց խմբովին արտասանված «Հայր մեր»-ով: Ապա բացման ու ողջույնի խոսքով հանդես եկավ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը: Սրբազան հայրը մասնավորապես շեշտեց այս հավաքի կազմակերպման անհրաժեշտությունը և այն համոզումը հայտնեց, որ հաջորդ նման հավաքույթները, որոնց կազմակերպմանն իր հավանությունն է տվել Նորին Սրբությունը, կանցկացվեն ավելի արդյունավետ ձևով:

Այնուհետև ատենավար սրբազան հայրը խոսք տվեց օրվա զեկուցողներից Տ. Պարգև վրդ. Մարտիրոսյանին:

Առաջին զեկուցման թեման էր՝ «Մարդաբանության յուսաբանումը ըստ տարբեր կրոնների»: Զեկուցող հայր սուրբն իր խոսքի մեջ անդրադարձավ տարբեր կրոններում մարդաբանության հարցի վերաբերյալ արտահայտված տեսակետներին, նշեց օտար կրոնների արտահայտած տեսակետների անկատարությունը այս հարցի վերաբերյալ և վեր հանեց քրիստոնեության տված ամբողջական ու կատարյալ պատկերացումները:

Զեկուցումից հետո տեղի ունեցավ քննարկում հետևյալ հիմնական հարցերի շուրջ.

1. Հոգու մահը ըստ քրիստոնեության և այլ կրոնների:
2. Մարդու փրկությունը քրիստոնեությունից դուրս:
3. Երկրորդ մահը և դրա պատճառները:

4. Մարմնի փրկությունը ըստ քրիստոնեության:

5. Տարբեր կրոնների ներկայացուցիչների միջև հանուն հավատքի մղվող պատերազմների պատճառները և քրիստոնյայի կեցվածքը:

Այնուհետև խոսք տրվեց Տ. Հովնան վրդ. Յերտերյանին: Հոգեշնորհ Հովնան վարդապետի թեման էր՝ «Հոգևոր հովվի պաշտոնը»: Զեկուցող հայր սուրբը իր խոսքի մեջ անդրադարձավ հովվի պաշտոնին ու պարտականություններին, նշեց հովվական ու եկեղեցական-վարչական գործունեության մեջ ծուխի, հոգևորականի, ծխական խորհրդի ու հարակից մարմինների դերն ու նշանակությունը: Այնուհետև հայր սուրբը խոսեց հոգևորականի պարտականությունների ու իրավունքների մասին:

Քննարկման ժամանակ առաջ քաշվեցին հետևյալ հիմնական հարցերը.

1. Հաղորդություն տալու ձևն այսօր՝ կապված ժամանակակից մտահոգող հանգամանքների հետ:

2. Շմկրտված անձանց նկատմամբ, հատկապես մահվան պարագային, հոգևոր բարեպաշտական արարողությունների կատարման հարցը Հայ Եկեղեցուց ներս:

Եղան նաև առաջարկներ աստվածաբանական, ծիսական ու եկեղեցագիտական ասպարեզներում առաջընթաց քայլ կատարելու ու բարեփոխումներ մտցնելու վերաբերյալ: Այս առթիվ նիստի ատենավար Տ. Նարեկ եպս. Շաքարյանը ու Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը առաջարկեցին գումարել առանձին նիստ և ընդունված առաջարկները ներկայացնել եպիսկոպոսական ընդհանուր ժողովին: Վերջում նիստի փակման խոսքով հանդես եկավ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը:

Նույն օրը, ժամը 12-ին, հավաքույթի մասնակիցները ուխտագնացություն կատարեցին Ս. Գեղարդա վանք, ուր կատարվեց «Հանգստյան» ժամերգություն: Ժամերգության ավարտին «Ո՞չ գիտէք, եթէ տաճար էք Աստուծոյ և Հոգին Աստուծոյ բնակեալ է ի ձեզ. Եթէ ոք զտաճար Աստուծոյ ապականէ, ապականեսցէ զնա Աստուած, զի տաճար Աստուծոյ սուրբ է, որ էք դուք» (Ա կորնթ. Գ 16—17) բնաբանով քարոզ խոսեց Տ. Աբրահամ աբեղ. Մկրտչյանը: Ապա վանքի վանահայր Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանը վանքի հոգևորականության անունից ողջունեց միաբանների այցը Ս. Գեղարդ, արտահայտելով այս առթիվ իր ուրախությունն ու անկեղծ հուզումը: Վերջում ոգեշունչ խոսք ասաց Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը, անդրադառնալով Հայ Եկեղեցու դարավոր անցյալին և այս ուխտագնացությունը համարելով միաբաններից յուրաքանչյուրի համար ուխտի վերանորոգման մի նոր ու անմոռաց պահ:

Արարողության ավարտից հետո Ս. Գեղարդա վանքի սեղանատանը հոգևորականությանը տրվեց սիրո ճաշ, որի ավարտին միաբանները իրենց շնորհակալությունները հայտնեցին վանահորն ու տեղի հոգևորականներին՝ սրտաբաց ընդունելության համար, և երեկոյան վերադարձան Մայր Աթոռ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԻԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՅԹԻ 1988 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի փետրվարի 18-ին, առավոտյան ժամը 10-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Մայր Աթոռի երիտասարդ միաբանների երրորդ նիստը:

Նիստի ատենավարն էր Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, ատենադպիրը՝ հոգեշնորհ Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանը: Նիստին ներկա էր նաև Ծիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը:

Նիստն սկսվեց խմբովին արտասանված «Հայր մեր»-ով: Ապա բացման խոսքով հանդես եկավ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Սրբազան հայրը մասնավորապես շեշտեց նախորդ օրվա նիստի հաջող ընթացքը, որից հետո խոսք տրվեց օրվա զեկուցողներից Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանին:

Հայր սուրբի զեկուցման թեման էր՝ «Մարտիրոսությունը Հայ Եկեղեցում»: Զեկուցող հայր սուրբը նախ ներկայացրեց իր դասախոսության բովանդակությունն ու նպատակը, ապա կանգ առավ մարտիրոս և նահատակ բառերի վրա՝ վեր հանելով դրանց իմաստային տարբերությունները: Եկեղեցու հայրերից ու վարդապետներից մեջբերումներ կատարելով, բանախոսը թափանցեց Եկեղեցու ծիսական կանոնների մեջ և վեր հանեց բացատրելով Եկեղեցու տոների շարքը՝ հատկացված մարտիրոսներին ու նահատակներին:

Այնուհետև հայր սուրբը հատվածներ

ներկայացրեց Թեոդիկի «Գողգոթա հայ հոգևորականության» գրքից, 20-րդ դարի սկզբներին Օսմանյան Թուրքիայի կողմից ծրագրված ջարդերի ընթացքում նահատակված հոգևորականների մասին:

Զեկուցումից հետո տեղի ունեցավ քննարկում հետևյալ հիմնական հարցերի շուրջ.

1. Հայ Եկեղեցու արքացման կանոնը անցյալում և այսօր՝

ա) ինչպիսի՞ն էր անցյալում:

բ) ինչպիսի՞ն է այսօր:

2. Հայ Եկեղեցու դիրքը 1915 թ. եղեռնի նահատակներին արքագործելու հարցում:

Երկրորդ զեկուցումով հանդես եկավ հոգեշնորհ Տ. Սասուն աբդ. Զմրուխտյանը, որի թեման էր՝ «Հովվի կոչումը»: Զեկուցող հայր սուրբը անդրադարձավ հովվի անձին, գործին ու կոչումին: Խոսելով հովվի անձի մասին, նա վեր հանեց հայ հովվի պատրաստության պայմանները՝ շեշտելով ազգային կողմը, որով հայ հովիվը տարբերվում է մյուս հովիվներից:

Հովվի գործին անդրադառնալով, վեր հանեց նրա նկարագրի, ծանոթությունների, այցելությունների, վարչական-կազմակերպչական պարտավորությունների կետերը:

Անդրադառնալով հովվի կոչումին, հայր սուրբը ընդգծեց նախանձախնդիր հովվի նվիրվածությունը իր կոչումին, վեր հանելով հոգևորականի անմնացորդ նվիրումն իր ժողովրդին և իր Եկեղեցուն:

Զեկուցումից հետո տեղի ունեցավ քննարկում հետևյալ հիմնական հարցերի շուրջ.

1. Հովվի հիմնական առաքելությունը:

2. Հայ հովիվը Հայաստանում և Սփյուռքում (նմանություններ և տարբերություններ):

3. Դիահերձման հարցը Արևմուտքում:

Վերջում նիստի փակման խոսքով հանդես եկավ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Նույն օրը, ժամը 12-ին, հավաքույթի մասնակիցները հավաքվեցին՝ գումարելու համար լրացուցիչ նիստ՝ առաջարկելու և քննարկելու իրենց մտահոգությունները: Մտքերի փոխանակումից հետո հավաքույթի մասնակիցները իրենց ասելիքները ամփոփեցին հետևյալ կետերի մեջ.

1. Կազմել հետագա հավաքույթների կազմակերպիչ հանձնախումբ, որի նպատակը լինի նախապատրաստական աշխատանք տանել և ճշտել հետ այսու հավաքույթներին ներկայացնելիք հարցերը:

Հանձնախումբի անդամներ ընտրվեցին՝

Տ. Հովնան վարդապետ Տերտերյանը.

Տ. Զատիկ վարդապետ Ավետիքյանը.

Տ. Պարգև վարդապետ Մարտիրոսյանը.

Տ. Սասուն աբեղա Զմրուխտյանը.

Տ. Աբրահամ աբեղա Մկրտչյանը:

2. Սասուն աբեղային հանձնարարվեց կազմել միաբանական ծրագիր-կանոնագիր:

3. Շնորհք աբեղային հանձնարարվեց կազմել միաբանական հասցեարան:

4. Առաջիկա հավաքույթի նյութերի պատրաստություն:

5. Հաղորդագրությունների պատրաստում և առաքում հայ և օտար թերթերին (հայերեն և օտար լեզուներով):

6. Միաբանների փոխայցելություններ:

Ժամը 14.30-ին Վեհարանում Վեհափառ Հայրապետը ճաշկերույթ տվեց հավաքույթի մասնակիցներին: Ճաշկերույթին մասնակցում էին նաև Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Նարեկ եպս. Շաքարյանը: Ճաշկերույթի ընթացքին իրենց խոսքերով հանդես եկան Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանն ու Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանը:

Վերջում Վեհափառ Հայրապետը տվեց իր Հայրապետական պատգամը:

Ժամը 18.30-ին հավաքույթի մասնակիցները մեկնեցին Երևան, ունկնդրելու «Անուշ» օպերան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԻԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՅԹԻ 1988 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի փետրվարի 19-ին, առավոտյան ժամը 8.30-ին, Մայր Աթոռի երիտասարդ միաբանների հավաքույթի անդամները ուխտագնացություն կատարեցին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցի: Եկեղեցում մասնակցեցին «Առավոտյան» և «Արևագալի» ժամերգություններին: Այս առթիվ ողջույնի խոսք ասաց Ս. Սարգիս եկեղեցու ծիսակատար Տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը: Տեր հոր սրտահույզ խոսքերից հետո «Ճանապարհ, ճշմարտութիւն եւ կեանք Քրիստոս. առաջնորդեա հոգւոց մերոց յերկրէ ելանել յերկինս» (Ժամագիրք) բնաբանով քարոզ խոսեց Տ. Զատիկ վրդ. Ավետիքյանը: Արարողության ավարտից հետո Արարատյան հայրապետական թեմի առաջնորդարանի հանդի-

սությունների դահլիճում կայացավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երիտասարդ միաբանների հավաքույթի չորրորդ նիստը:

Նիստի ատենավարն էր Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը, ատենադպիրը՝ Տ. Եզրաս աբդ. Ներսիսյանը:

Նիստի բացման ու ողջույնի խոսքով հանդես եկավ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը: Սրբազան հայրը մասնավորապես շեշտեց Հայ Եկեղեցու բարեկորգության հարցը, տեղին հիշելով Մաղաքիա արքեպս. Օրմանյանի դեռևս դարասկզբին արտահայտած այն կարծիքը, որ Հայ Եկեղեցին ժամանակ առ ժամանակ ենթարկվել է բարեկորգումների: Սրբազան հայրը իր խոսքում անդրադարձավ նաև Մայր հայրենիքից արտագաղթի խնդրին, քննադատելով այդ երևույթը և առաջադրելով, որ յուրաքանչյուր հայ հոգևորական, լինի Մայր Հայրենիքում թե Սփյուռքում, գործունեություն ծավալի այդ երևույթի կանխման համար:

Այնուհետև խոսք տրվեց օրվա զեկուցողներից Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանին: Ասողիկ հայր սուրբի զեկուցման թեման էր՝ «Խորհուրդ արարչագործության և մարդու արարման ու անկման պատումը ըստ Ծննդոց գրքի»: Զեկուցողն իր խոսքում անդրադարձավ մարդու արարչագործության պատմության սկզբնավորմանն ու զարգացմանը, մեղքի և փրկության գաղափարին, մարդու ինքնիշխանությանը, Ադամական մեղքին և այս հարցերի վերաբերյալ Նորկտակարանյան պատասխաններին:

Զեկուցումից հետո տեղի ունեցավ քննարկում հետևյալ հիմնական հարցերի շուրջ.

1. Ժառանգական մեղք:
2. Մարդու անմեղանչականության հարցը:

Այնուհետև խոսք տրվեց Տ. Աբել աբդ. Օղլուգյանին: Աբել աբեղայի զեկուցման թեման էր՝ «Պատարագի և փոխակերպության վարդապետությունը հայոց մեջ»:

Զեկուցող հայր սուրբը իր խոսքի մեջ անդրադարձավ Հայ Եկեղեցում պատարագի ժամանակ փոխակերպության խորհրդի վերաբերյալ ԺԴ դարում Լատին Եկեղեցուց ներս կազմավորված սխալ պատկերացումներին: Վկայակոչումներ անելով Հայ Եկեղեցու պատմությունից ու մատենագրությունից, զեկուցողը ցույց տվեց այդ տեսակետների անհիմն լինելը:

Քննարկման ժամանակ արծարծվեցին հետևյալ հարցերը.

1. Հայ և Լատին Եկեղեցիների ծիսակատարությունները ս. պատարագի փոխակերպման հարցում:
2. Ս. պատարագի խորհուրդը վավերական համարելու պայմանները:
3. Ս. պատարագ մատուցելու հիմնական միջոցների՝ ցորենի հացի ու խաղողի գինու բացակայության դեպքում ինչո՞վ փոխարինել դրանք:

Նիստի ավարտից հետո մասնակիցները այցելեցին Ծիծեռնակաբերդ՝ Ապրիլյան եղեռնի նահատակաց հուշարձան, և կատարեցին հոգեհանգստյան պաշտոն:

Օրվա երկրորդ կեսին սրբազան հայրը ճաշկերույթ տվեց հավաքույթի մասնակիցներին: Ճաշկերույթի ընթացքին հոգևորականի հայրենասիրական ու եկեղեցանվեր գործունեության մասին ոգեշունչ խոսք ասացին Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը, Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը, Տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը և ուրիշներ:

Հավարտ ճաշկերույթի հավաքի անդամները իրենց շնորհակալությունը հայտնեցին սրբազան հորն ու Արարատյան թեմի հոգևորականությանը՝ արտաքաց ընդունելության համար, և վերադարձան Մայր Աթոռ, ճանապարհին այցելելով նաև Երևանի վերանորոգվող Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԻԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՅԹԻ 1988 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռի Վանատանը տեղի ունեցավ երիտասարդ միաբանների հավաքույթի վերջին՝ եզրափակիչ նիստը: Ատենավարն էր Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը, ատենադպիրը՝ Տ. Սերովբե աբդ. Իսախանյանը: Նիստի ընթացքում նախ ամփոփվեցին նախորդ նիստերի արդյունքները: Հայկազուն հայր սուրբը գոհունակությամբ նշեց, որ հավաքի բոլոր մասնակիցները հաճույքով, լրջությամբ ու նվիրվածությամբ իրենց մասնակցությունը բերեցին ներկա հավաքի աշխատանքներին: Եվ ապա հույս հայտնեց, որ միաբանության միջև հաստատված սիրո ու փոխադարձ հասկացողության կապը այսուհետ է՛լ ավելի

կամրապնդվի ի շահ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հոգուտ միաբանության:

Արդյունքների ամփոփումից հետո Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանը ներկայացրեց իր պատրաստած «Աղոթք միաբանութեան Սրբոյ Էջմիածնի» խորագիրը կրող աղոթքը, որը միաբանության քննարկումից և որոշ փոփոխություններից հետո՝ հավանության արժանացավ: Սույն աղոթքը արտասանվելու է Մայր Աթոռի յուրաքանչյուր միաբանի կողմից ս. պատարագի ծածուկ աղոթքների շարքում:

Ապա խոսք առավ Տ. Սասուն աբղ. Զմրուխտյանը: Հայր սուրբը անդրադարձավ միաբանական հաջորդ հավաքի ծրագրին առնչվող մի շարք հարցերի, որոնք արժանացան ներկաների հավանությանը.

1. Ցանկություն հայտնվեց այսուհետև Մայր Աթոռի երիտասարդ միաբանների հավաքույթները անցկացնել երկու տարին մեկ:

2. Հաջորդ հավաքույթին պատրաստ ունենալ ներկա հավաքի հաղորդագրությունների գրքույկը:

3. Առաջարկվեց հաջորդ հավաքին ներկայացվող նյութերի ընտրությունը թողնել յուրաքանչյուր միաբանի հայեցողության:

4. Հաջորդ հանդիպման ընթացքում ազատ ժամանակ թողնել միաբանների անպաշտոն զրույցների համար:

5. Գումարել տեղական հավաքներ, որոնց նպատակը պիտի լինի հող պատրաստել հաջորդ ընդհանուր հավաքույթի անցկացման համար:

Տ. Հովնան վրդ. Տերտերյանը առաջարկեց Տ. Զատիկ վրդ. Ավետիքյանի և Տ. Սասուն աբղ. Զմրուխտյանի պատասխանատվությամբ կազմել հավաքույթի հաղորդագրությունների գրքույկը՝ համապատասխան լուսանկարներով:

Վերջում նիստի ատենավար Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը շնորհակալական ու գնահատանքի խոսք ուղղեց Տ. Հովնան վրդ. Տերտերյանին՝ սույն հավաքույթի կազմակերպման և արդյունավետ անցկացման համար:

Ժամը 12-ին հավաքույթի մասնակիցները ուխտագնացության մեկնեցին Ս. Խորվիրապի վանք: Վանքի բակում միաբաններին դիմավորեցին ու քարի գալուստ մաղթեցին տեղի հոգևորականները՝ գլխավորությամբ վանահայր Տ. Գուրգեն ավ. քհն. Մուրադյանի: Միաբանական կարճատև աղոթքից հետո ուխտագնացներին ուղղված ողջույնի խոսքով հանդես եկավ վանահայր տեր հայրը: Խոսքի մեջ նա ուրախությամբ անդրադարձավ երիտասարդ միաբանների ուխտագնացությանը Մայր Հայրենիք և մասնավորաբար մեր Եկեղեցու մեծագույն սուրբի և առաջին հայրապետի՝ Ս. Գրիգոր Լուսավորչի հիշատակը հավերժացնող Խորվիրապի վանք: Ապա հայրենասիրական ոգեշունչ քարոզ խոսեց Տ. Սասուն աբղ. Զմրուխտյանը:

Արարողությունից հետո վանքի սեղանատանը տրվեց ճաշկերույթ, որի ընթացքում Տ. Հայկազուն հայր սուրբը նախ շնորհակալություն հայտնեց տեղի հոգևորականությանը՝ սիրալիր ընդունելության համար, ապա ներկայացրեց վանահոր բազմամյա օրինակելի գործունեությունը՝ ի սպասավորություն մեր Եկեղեցու ու ժողովրդի: Ճաշկերույթին սրտաբուխ խոսքով հանդես եկավ նաև Տ. Գուրգեն ավ. քհն. Մուրադյանը:

Ժամը 16-ին հավաքույթի մասնակիցները վերադարձան Մայր Աթոռ:

Երեկոյան ժամը 19-ին Վեհարանի ընդունելության դահլիճում «Հայ եկեղեցու քրիստոսաբանությունը» թեմայով զեկուցում կարդաց հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը, ապա տեղի ունեցավ մտքերի աշխույժ փոխանակություն:

Փետրվարի 22-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, արտասահմանում ծառայող Մայր Աթոռի միաբանները Սփյուռքահայության հետ Մշակութային կապի կոմիտեում հանդիպում ունեցան Կոմիտեի նախագահ տիար Կառլեն Դալլաքյանի հետ:

Նույն օրը, ժամը 12.30-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդում Մայր Աթոռի միաբաններին ընդունեց Խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանը:

Երեկոյան Վեհարանում հավաքույթի մասնակիցներին ընդունեց Վեհափառ Հայրապետը և, ծանոթանալով միաբանների կատարած աշխատանքներին, տվեց Հայրապետական իր օրհնությունները և հաջողություն մաղթեց հետագա գործունեության համար:

ԱԲՐԱՀԱՄ ԱԲԵՂԱ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի մարտի 10-ին հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 7 շրջանավարտների դիպլոմային աշխատանքների բանավոր պաշտպանություն:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը (ատենավար), Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը և Վիրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գեվորգ եպս. Սերաբդարյանը, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և հյուրեր:

Քննող հանձնաժողովի կազմում էին՝ հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը (հանձնաժողովի նախագահ) և հոգևոր ճեմարանի դասախոսներ՝ բանասիրական գիտությունների թեկնածու պրն. Արմեն Տեր-Ստեփանյանը և հոգեբանական գիտությունների թեկնածու պրն. Երվանդ Գրիգորյանը:

Նախ ընթերցվեց ներկայացված յուրաքանչյուր աշխատանքի վերաբերյալ հանձնաժողովի կողմից կազմված եզրակացությունը, որից հետո յուրաքանչյուր շրջանավարտ հանդես եկավ իր ավարտաճառի բանավոր պաշտպանությամբ և պատասխանեց տրված հարցերին:

Իրենց ավարտաճառերի պաշտպանությամբ հանդես եկան և հոգևոր ճեմարանի շրջավարտի դիպլոմներ ստացան.

1. Հրաչ սրկ. Հակոբյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Եվսեբիոս Կեսարացին հայ մատենագրության մեջ»:

Աշխատանքը բաղկացած էր 145 մեքենագիր էջից և ընդգրկում էր Եվսեբիոս Կեսարացու կյանքը և գրական ժառանգությունը, Եվսեբիոս Կեսարացու գործերի հայերեն թարգմանությունների մատենագիտությունը, ինչպես նաև որոշ բնագրեր:

Ներկայացված աշխատանքը գնահատվեց **գերազանց:**

2. Գևորգ սրկ. Աջապահյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Պետրոս Բերդումյան. կյանքը, գործը և «Մեկնութիւն Յոբայ» աշխատությունը»:

Աշխատանքը բաղկացած էր ուսումնասիրությունից (52 մեքենագիր էջ) և բնագրից (403 մեքենագիր էջ):

Տրված է ժամանակաշրջանի ընդհանուր բնութագիրը, Պետրոս Բերդումյանի կյանքն ու գործունեությունը, մատենագրական վաստակը և «Մեկնութիւն Յոբայ» բնագիրը:

Ներկայացված ուսումնասիրությունը գնահատվեց **գերազանց:**

3. Կամո սրկ. Աբրահամյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Աղվանից եկեղեցու համառոտ պատմություն (Դ—ԺԷ դարեր)»:

Ավարտաճառը բաղկացած էր 80 մեքե-

նագիր էջից և ուներ հետևյալ բովանդակությունը.

Աղվանից Եկեղեցին Աղվանքում, Կապաղակյան և Զողյան շրջան (Դ—Զ դարեր), Աղվանից կաթողիկոսության Պարտավյան շրջանը (Զ—Թ դարեր), Աղվանից կաթողիկոսությունը աստանդական վիճակում (Թ—ԺԵ դարեր), Գանձասարի կաթողիկոսությունը (ԺԵ—ԺԷ դարեր):

Ներկայացված ուսումնասիրությունը գնահատվեց քաջալավ:

4. Արծվի սրկ. Գևորգյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Իրինիոս Լուգդունացու աստվածաբանական հայացքները»:

Աշխատանքը բաղկացած էր 51 մեքենագիր էջից և ներկայացնում էր Իրինիոսի տեսակետները Աստուծո մասին, Երրորդության մասին, հեղինակի քրիստոսաբանությունը, վերագլխության վարդապետության, խորհուրդների ու վախճանաբանության մասին:

Ներկայացված աշխատանքը գնահատվեց լավ:

5. Տ. Համազասպ քհն. Բաբուջյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Հովհան Դամասկացու երկու ճառերը ընդդեմ Նեստորականության»:

Աշխատանքը տեղեկություններ էր հաղորդում Հովհան Դամասկացու երկերի հայերեն թարգմանությունների և Նեստորի հերետիկոսության մասին, քննվում են «Բանք վասն հաւատոյ և ընդդիմադրութիւն Նեստորի» և «Նեստորի որք համախորհ էք առ ձեզ այսպէս ակսանիմք» գործերում արծարծված խնդիրները: Կցված են նաև բնագրերը:

Ներկայացված աշխատանքը գնահատվեց քաջալավ:

6. Գառնիկ սրկ. Կարապետյան.

Ներկայացրած ավարտաճառի թեման էր՝ «Կիլիկիայի հայոց թեմերը ԺԲ—ԺԴ դարերում»:

Ավարտաճառը բաղկացած էր 55 մեքենագիր էջից:

«Երկու խոսք»-ից ու «Ներածություն»-ից հետո Գառնիկ սարկավագն անդրադարձել էր Կիլիկիայի թեմերից յուրաքանչյուրի պատմությանը և ճշտել յուրաքանչյուր թեմի գավազանագիրքը:

Ներկայացված աշխատանքը գնահատվեց լավ:

7. Սամվել սրկ. Հովհաննիսյան.

Նրա ներկայացրած ավարտաճառի թեման էր՝ «Վաղ քրիստոնեական ջատագովական գրականությունը և Մինուկիոս Ֆելիքսի «Օկտավիոս» երկը»:

Աշխատանքը բաղկացած էր 154 մեքենագիր էջից և ուներ հետևյալ բաժանումները.

Ջատագովական գրականության ծագման պատճառները, նպատակները և մեթոդները:

Փիլիսոփայության նկատմամբ քրիստոնյաների դիրքորոշման հարցը Բ—Գ դարերի քրիստոնեական գրականության մեջ:

Մինուկիոս Ֆելիքսը և նրա «Օկտավիոս» երկը:

Մինուկիոս Ֆելիքս. «Օկտավիոս» (բնագրի թարգմանություն):

Ծանոթագրություններ:

Ներկայացված աշխատանքը գնահատվեց գերազանց:

Ավարտաճառերի պաշտպանությունից ու հոգևոր ճեմարանի դիպլոմների հանձնումն հանդիսավոր արարողությունից հետո շրջանավարտներին ուղղված շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսք ասաց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը.

«Գերաշնորհ Սրբազան Եղբայրներ,

Վերստին բոլորվել ենք հոգևոր ճեմարանի հարկի տակ: Միասին հուզումով և գոհունակությամբ հետևեցինք ճեմարանի շրջանավարտ յոթ սաների ներկայացրած ավարտաճառերի բանավոր պաշտպանությանը: Անցյալ ուսումնական տարվա հունձքն էր, որ ներկայացվում էր մեզ: Առատ ու բարի հունձքի առաջ կանգնած հնձվորի նման մեր սրտերը ուրախությամբ լցվեցին: Ուրախությամբ լցվեցինք, որովհետև մի պահ շրջանավարտ մեր սաներին պատկերացրինք իրենց ապագա ծառայությանը նվիրված, և գոհունակության մի զգացում պատեց մեր ներքին աշխարհը, թե Հայաստանյայց Եկեղեցին ոտքի է կանգնում իր վերքերը բուժելով, և թե որքան անկատար իղձեր կան մեր առաջ, որոնք իրականանալու են մեր շարքերը խտացնող այս նոր նվիրյալների միջոցով:

Ներկայացված ավարտաճառերը ընդհանրապես գնահատելի աշխատություններ էին, նրանցից մի քանիսը՝ նույնիսկ լուրջ ու հասուն գործեր՝ արժանի հրատարակության: Շնորհավորում ենք մեր շրջանավարտ սարկավագ և քահանա եղբայրներին՝ մաղթելով նրանց, որ բանիվ, գործով

և գրչով շարունակեն բարձրանալ մեր Եկեղեցու ծառայության աստիճաններից վեր:

Հոգևոր ճեմարանը նմանվում է մի փեթակի, ուր եռուն կյանք են վարում մեր սաները: Այս հարկի տակ միշտ կյանք կա, միշտ ձայն ու խոսք, երգ ու նվագ: Նշանակում է՝ այստեղ աշակերտներ են ապրում ու աշխատում, և այդ աշխատանքը մեր կյանքի խորհրդանշանն է, մեր գոյության իմաստը: Այս հարկի տակ ուսում է ջամբվում, գիտություն է տրվում Հայ Եկեղեցու սպասավորությանը կոչված մատաղ նոր սերնդին: Ուսումնառության և աշխատանքի այս եռանդն է, որ լցնում է մեր սրբավայրի շրջափակը և մեր դարավոր պատմության հետ հանդիպում է այստեղ մեր նոր կյանքի ծնունդը: Մայր Աթոռում եռուն աշխատանք է գնում, կյանքն է եռում, և մեր անցյալը այստեղ հանդիպում է ներկային, որից և սկիզբ է առնում ապագայի հանդեպ մեր ունեցած լավատեսությունը:

Ս. Էջմիածնի հովանու տակ մեր անցյալի եռամեծ հոգևոր սպասավորները նոր կյանք են ստացել, իրենց գիտության ծարավն են հագեցրել և ծառայության կոչվել նոր տեսիլներով և իդեալներով: Ճեմարանի գրասեղանների առաջ քանի՜ սերունդներ են դաստիարակվել: Գիտության ծարավը անհագ մի ծարավ է. ինչքան խմեք նրանից, այնքան պահանջն ավելանում է, մինչև մեր անցավոր կյանքի վերջին հանգրվանը:

Սիրելի շրջանավարտներ, ձեր առաջ այսօրվանից մի նոր կյանքի շրջան է սկսվում: Հրաժեշտ ենք առնում հոգևոր ճեմարանից, բայց ոչ ուսումնառությունից, գրքից ու գրչից: Զգացեք կյանքում դուք ձեզ իբրև հավիտենական աշակերտներ, միշտ սովորեցեք, մարդ տևապես սովորում է՝ առանց գիտության կատարելության հասնելու: Ցուտով, իբրև ձեռնադրյալ հոգևոր սպասավորներ, դուք ևս ձեր հերթին, ըստ Քրիստոսավանդ խոսքի, ժողովրդի ծոցում ծառայության եք կոչվելու՝ քարոզելով, սովորեցնելով, մկրտելով և լույս տարածելով: Ձեզ բարի ճանապարհ և հաջողություն:

Ցնորհավորում եմ ձեզ հանուն Վեհափառ Հայրապետի և բերում Նորին Սրբության օրհնությունները ձեզ բոլորիդ»:

Հաջորդ օրը շրջանավարտներին ընդունեց Վեհափառ Հայրապետը և իր օրհնությունը բաշխեց բոլորին:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է շրջանավարտներին, մաղթելով, որ ապագայում դառնան արժանի մշակները Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու:



ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ՝ ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԻՑ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ 350-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ Ա ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ս. Էջմիածնի վարդապետարանը նույնքան հին է, որքան ինքը՝ Ս. Էջմիածինը: Այն հաստատվել է Դ դարի սկզբին՝ Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից: Գրերի գյուտից հետո Ս. Մեսրոպ Մաշտոցն ու Ս. Սահակ Պարթևը առանձնահատուկ հմայք են հաղորդել այդ հոգևոր ուսումնական հաստատությանը:

Հայրապետական Աթոռի Դվին փոխադրության հետ միասին տեղափոխվում է նաև կաթողիկոսարանի դպրոցը: Երկար դարեր կաթողիկոսական գահի հետ միասին թափառելուց հետո, այն կրկին վերահաստատվում է Ս. Էջմիածնում 1441 թվականին: Սակայն դժբախտաբար դա տևում է ընդամենը երկու տարի:

Եվ միայն ԺԷ դարի առաջին կեսին է, որ Մովսես Տաթևացու անդուլ ջանքերի շնորհիվ հաջողվում է կրկին վերաշինել հոգևոր դպրոցը նյութական և հոգևոր առումներով:

Մայր Աթոռի վերաշինության հետ միասին Մովսես կաթողիկոսը ձեռնամուխ է լինում նաև դպրատան ստեղծման գործին, բայց քանի որ մայրավանքը գտնվում էր խիստ ավերված վիճակում, ուստի հոգևոր վարժարանի բացման գործը չձգձգելու համար վերջինս բացվում է Հովհաննավանքում 1629 թվականին:

Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսը դպրեվանքը Հովհաննավանքից տեղափոխում է Ս. Էջմիածին՝ 1637—1640 թթ. միջև: Այսպիսով, լրանում է դպրեվանքի փոխադրության 350-ամյակը:

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և Գերագույն Հոգևոր Խորհրդի հաստատումով հոգևոր ճեմարանի տեսչությունը պատրաստվում է 1990 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հանդիսավորապես նշել այդ հոբելյանը, իսկ մինչ այդ անցկացնել գիտական զեկուցումների երեք նստաշրջաններ:

Ս/թ. մարտի 14—16-ը տեղի ունեցավ Ա նստաշրջանը, որի նպատակն էր երևան հանել Մայր Աթոռի դպրանոցի այն աշակերտներին կամ ուսուցիչներին, որոնք կարևոր ներդրում են ունեցել Հայ Եկեղեցու և հայ մշակույթի զարգացման գործում, սակայն մինչև օրս մնացել են անհայտ:

Ընդհանուր թվով անցկացված վեց նիստերի ընթացքում ընթերցվեցին 12 զեկուցումներ, որոնց քննարկումը ընթացավ աշխույժ և գիտական մթնոլորտում: Նստաշրջանի յուրաքանչյուր օրվա ընթացքում գումարվում են երկու նիստեր, որոնց ընթացքում ներկայացվում էին չորս զեկուցումներ տարբեր թեմաներով:

Մարտի 14-ի առավոտյան ժամը 10-ին տեղի ունեցավ նստաշրջանի բացումը: Բացման խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի նախկին տեսուչ, այժմ Մայր Աթոռի դիվանապետ գեր. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Սրբազան հոր նախագահությամբ հաջորդաբար տեղի ունեցան երկու նիստեր, որոնց ընթացքում զեկուցումներով հանդես եկան հոգևոր ճեմարանի տեսուչ, աստվածաբանության դոկտոր Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը, «Էջ-

միածին» ամսագրի խմբագրության քարտուղար Տ. Աբրահամ աբեղ. Մկրտչյանը, Լենինգրադի հոգևոր Ակադեմիայի դոցենտ Ավգուստին վրդ. Նիկիտինը, Մցխեթի հոգևոր սեմինարիայի դասախոս պրն. Վլադիմիր Սաբիաշվիլին:

Տ. Եզնիկ քահանան համառոտ գծերով ներկայացրեց ճեմարանի 350 տարվա պատմությունը՝ հատկապես անդրադառնալով ժամանակի հանգուցային կետերին: Ապա Տ. Աբրահամ աբեղան հանդես եկավ «Մելիքսեթ Վժանեցին և Էջմիածնի դպրոցի վերաբացման նախապայմանները» զեկուցումով, որի մեջ մանրամասն և համակողմանի կերպով քննված էր Մայր Աթոռում բարձր տիպի հոգևոր դպրոց ունենալու անհրաժեշտությունը ԺԷ դարի երկրորդ քառորդին: Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչը զեկուցեց «Ս. Պետերբուրգի հոգևոր ճեմարանը և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին» թեմայով, որի մեջ մասնավորաբար անդրադարձավ ԺԹ դարի ռուս ականավոր հոգևորական Պորֆյուր վարդապետի և Հայ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների սերտ և բարեկամական կապերին: Վրաստանից պրն. Վլադիմիր Սաբիաշվիլին ներկայացրեց ԺԹ դարի Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Անտոն Ա-ի հայերենից վրացերեն կատարած թարգմանությունները: Պետք է նշել, որ յուրաքանչյուր զեկուցումից հետո տեղի էր ունենում մտքերի աշխույժ փոխանակություն, որի ընթացքում արվում էին բազում շինիչ և օգտակար դիտողություններ:

Մարտի 15-ին նույնպես տեղի ունեցան երկու նիստեր, որոնց ընթացքում ընթերցվեցին զեկուցումներ տարբեր ժամանակահատվածներում Ս. Էջմիածնի հոգևոր դպրոցում գործունեություն ծավալած հոգևորականների մասին: Բանասիրական գիտությունների թեկնածու և հոգևոր ճեմարանի դասախոս պրն. Արտաշես Մաթևոսյանը ներկայացրեց Արփենիկ Ղազարոսյանի զեկուցումը Զաքարիա եպս. Գուլասպյանցի (+1835) մասին: Հոգևոր ճեմարանի դասախոս Տ. Հուսիկ քհն. Լազարյանը հանդես եկավ ԺԹ դարի եկեղեցական մեծանուն գործիչներից մեկին՝ Հովհաննես եպս. Շահխաթունյանցին նվիրված իր զեկուցումով, որի մեջ լույս էր սփռված վերջինիս կյանքի մի շարք շրջանների վրա: Ապա Աբել արքեպս. Մխիթարյանցի կյանքը ու գործունեությունը ներկայացրեց հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը: Նստաշրջանի երկրորդ օրը եզրափակվեց ԺԸ դարի Հայ Եկեղեցու խոշորագույն ներկայացուցիչներից Պետրոս արքեպս. Բերդումյանին նվիրված զեկուցմամբ, որի հեղինակն էր հոգևոր ճեմարանի դաստիարակ Գևորգ սրկ. Աջապահյանը: Սույն երկու նիստերին նախագահում էր Վրահայոց թեմի առաջնորդ գեր. Տ. Գևորգ եպս. Սերաստարյանը:

Մարտի 16-ին Արգենտինայի հայոց առաջնորդ գեր. Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանի նախագահությամբ տեղի ունեցան եզրափակիչ երկու նիստերը, որոնց ընթացքում տարբեր նյութերով հանդես եկան Սամվել սրկ. Հովհաննիսյանը, աստվածաբանական գիտությունների թեկնածու և հոգևոր ճեմարանի դասախոս Տ. Պարգև վրդ. Մարտիրոսյանը, աստվածաբանության մագիստրոս Տ. Խաչակ վրդ. Պարսամյանը և բանասիրական գիտությունների դոկտոր Լևոն Տեր-Պետրոսյանը:

Սամվել սարկավագի զեկուցման նյութն էր՝ «Պետրոս Քյութուրը և նրա «Հաւաքումն Աստվածաբանութեան» դասագիրքը», որտեղ հանգամանորեն քննության էր առնված այդ գործի արժեքն ու նշանակությունը: Պարգև վարդապետը խոսեց Ս. Էջմիածնում փիլիսոփայական առարկաների դասավանդման մասին՝ մասնավորապես կանգ առնելով Ստեփանոս Լեհացու կատարած թարգմանությունների վրա: Ապա Խաչակ վարդապետը հանդես եկավ «Սահակ վրդ. Ամատունու նպաստը հայ ծեսի ուսումնասիրության գործում» թեմայով: Գիտական նստաշրջանի վերջին զեկուցման թեման էր՝ «Աստվածաշնչի թարգմանության և քննական բնագրի պատրաստման ուղղությամբ Մայր Աթոռում տարված աշխատանքները ԺԹ դարի վերջին քառորդում», որով հանդես եկավ հոգևոր ճեմարանի դասախոս պրն. Լևոն Տեր-Պետրոսյանը:

Այսքանով հոգևոր ճեմարանի՝ Հովհաննավանքից Ս. Էջմիածին փոխադրության 350-ամյակին նվիրված գիտական զեկուցումների Ա նստաշրջանը ավարտեց իր աշխատանքները: Նախատեսված է մինչև 1990 թ. սեպտեմբերը անցկացնել ևս երկու նման նստաշրջան, որոնք, հուսով ենք, նույնպես կանցնեն գիտական պատշաճ մակարդակով:

ԳԵՎՈՐԳ ՍՐԿ. ԱՋԱՊԱՀՅԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 6-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Առաջնորդեա ինձ ի ճանապարհի քում և գնացից ի ճշմարտութեան քում և ուրախ եղիցի սիրտ իմ երկնչիլ յանուանէ քումմէ» (Սղմ. ՁԶ 11) բնաբանով։

* * *

Հունվարի 7-ին, հինգշաբթի.—Յիշատակ մեռելոց։

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա. ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավագ քհն. Բաղրամյանը։

* * *

Հունվարի 10-ին, շաբաթ.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ես եմ ճանապարհն և ճշմարտութիւն և կեանք. ոչ ոք գայ առ Հայր եթէ ոչ ինձն» (Հովհ. ԺԴ 5) բնաբանով։

* * *

Հունվարի 13-ին, չորեքշաբթի.—Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Աբրահամ աբդ. Մկրտչյանը։

* * *

Հունվարի 14-ին, չորեքշաբթի.—Տօն Ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին։

Այսօր Մայր տաճարում, Ս. Հովհաննես Մկրտչի խորանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավագ քհն. Սիմոնյանը։

* * *

Հունվարի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եզրաս աբդ. Ներսիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ով Յիսուս Քրիստոս, Մերժեա-

ցե՛ս, հանցե՛ս, հատցե՛ս, խափանեսցե՛ս... պակասեսցի՛ն զէնք զրպարտողին, անկցի՛ն սուսերք մահաբերին» (Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», բան Ղ) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հունվարի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արամ վրդ. Բոյաջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ես եմ, մի երկնչիք» (Մարկ. Զ 50) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հունվարի 31-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սեպուհ աբդ. Զուլչյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա զաղքատս և զխեղս, զկաղս և զկոյրս» (Ղուկ. ԺԴ 13) բնաբանով:

* * *

Փետրվարի 3-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Փետրվարի 7-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նավասարդ աբդ. Կճոյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղծութենէ մարմնոյ եւ հոգւոյ, կատարեսցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ» (Բ Կորնթ. Է 1) բնաբանով:

* * *

Փետրվարի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Փետրվարի 11-ին, հինգշաբթի.—Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանը և պատարագի ավարտին Իջման ս. սեղանից քարոզ խոսեց՝ «Զի օրէնք խաղաղութեան ոչ է հանապազ ողջունելի, այլ ժամանակի ընտրողութեամբ: Թէ հնար է, ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք, յորժամ ոչ եղև հնար՝ ընտրեաց զպատերազմելն» (Ներսես Լամբրոնացի) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Փետրվարի 14-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն: ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Սասուն աբդ. Զմրուխտյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Խաղաղութիւն ամենեցուն» (Ժամագիրք) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Փետրվարի 17-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Փետրվարի 21-ին, կիրակի.—Բ կիր. Քառասնորդական Պահոց (Արտաքսման):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղա-

ցի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Արարատ աբդ. Գալեթագճյանը: «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես երեպս. Պոզապալյանը (տես էջ 52):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Փետրվարի 28-ին, կիրակի.—Դ կիր. Քառասնորդական Պասից (Անառակին):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավագ քհն. Բաղրամյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Զատիկ վրդ. Ավետիքյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մարտի 2-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Մարտի 6-ին, կիրակի.—Դ կիր. Քառասնորդական Պասից (Տնտեսին):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանը և հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մարտի 9-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Մարտի 18-ին, կիրակի.—Ե կիր. Քառասնորդական Պասից (Դատաւորին):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը: Հավարտ պատարագի, կատարվեց հոգեհանգստյան հատուկ կարգ՝ Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում նահատակված հայերի հիշատակին:

Ողբերգական մահով զոհվածների հարազատներին և հայ ժողովրդին ուղղված հոգևոր մխիթարության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը (տես էջ 5):

* * *

Մարտի 16-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Մարտի 19-ին, շաբաթ.—Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, իր անդրանիկ պատարագը մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն եւ առցէ զխաչ իւր եւ եկեսցէ զկնի իմ (Մատթ. ԺԶ 24) բնաբանով:

* * *

Մարտի 20-ին, կիրակի.—Զ կիր. Քառասնորդական Պասից (Գալստեան):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավագ քհն. Սիմոնյանը: «Հայր մեր»-ից առաջ, օրվա տոնի առթիվ, քարոզ խոսեց Տ. Սեպուհ աբդ. Չուլջյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մարտի 28-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Մարտի 27-ին, կիրակի.—Ծաղկազարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Օրհնութիւն Որդւոյ Դաւթի, օրհնեալ որ գայ յանուն Տեառն, օրհնութիւն ի բարձունս» (Մատթ. ԻԱ 9) բնաբանով (տես էջ 56):

*
* *

Մարտի 31-ին, հինգշաբթի.—Աւագ հինգշաբթի: Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, «միջօրէի» ս. պատարագ մատուցեց Տ. Նավասարդ աբդ. Կճոյանը:

Երեկոյան ժամը 17.30-ին Մայր տաճարում կատարվեց «Ոտնլուայ»-ի կարգը՝ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի հանդիսադրությամբ:

Հանդիսավոր արարողությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան ժամը 19.30-ին «ի գիշերի հսկումն» կատարվեց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

«Փառք ի բարձունս»-ից հետո քարոզ խոսեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ «Արծաթսիրութեամբ մոլեալ Յուդա. իւր զմեծ վարդապետն ընդ 30 արծաթոյ հրէից մատնէր» (Շարական) բնաբանով:

*
* *

Ապրիլի 1-ին, ուրբաթ.—Աւագ ուրբաթ: Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր, ժամը 11.30-ին, Մայր տաճարում կատարվեց «Կարգ խաչելութեան» արարողությունը:

Երեկոյան ժամը 18.30-ին, հանդիսադրությամբ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, կատարվեց «Կարգ թաղման» արարողությունը:

*
* *

Ապրիլի 2-ին, շաբաթ.—Աւագ շաբաթ: Մոգալոյց Ջատկի:

Այսօր, ժամը 18-ին, Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Պատարագի ընթացքում հանդիսավորությամբ հնչեց Հարության ավետիսը՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

«Հայր մեր»-ից առաջ օրվա տոնի առթիվ բովանդակալից քարոզ խոսեց պատարագիչ սրբազան հայրը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 4-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը:

*
* *

Ապրիլի 7-ին, հինգշաբթի.—Աւետումն Ս. Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

*
* *

Ապրիլի 10-ին, կիրակի.—Կրկնազատիկ (Նոր կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սերովբե աբդ. Իսպահանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Նոր Իսրայէլ կոչեցեալք ի Քրիստոս նոր օրհնութիւնս վերս առաքեսցուք նորոգողին տիեզերաց» (Շարական) բնաբանով:

*
* *

Ապրիլի 17-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*
* *

Ապրիլի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՏՎՅՈՒԹՅՈՒՆ

Հունվարի 4-ին, երկուշաբթի օրը, Վեհափառ Հայրապետի 1523 թվականի կոնդակով ավագության աստիճան շնորհվեց Ս. Հռիփսիմե վանքի լուսարար Տ. Ղևոնդ քհն. Հարությունյանին՝ երկարամյա ու բարեխիղճ քահանայական ծառայության համար:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊ. ՊՈՂԱՊԱՆՅԱՆ

ՔԱՐՈԶ
ԽՈՍՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ ՕՐԸ
(21 փետրվար, 1988 թ.)

«Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Որ զօրէնս սրբութեան պահոց, նախ ի դրախտին առանդեցեր...» (Շարական):

Սիրելի հավատացյալներ,

Մեծի Պահոց երկրորդ կիրակին մեր երանաշնորհ հայրապետները կոչել են Արտաքսման կիրակի, ի նկատի ունենալով առաջին մարդու՝ Ադամի, իբրև արդյունք նրա մեղանչման, դրախտից արտաքսումը: Այս առթիվ Արտաքսման կիրակի օրվան նվիրված շարականում արքազան տաղերգուն գրել է. «Պահեցողության սուրբ օրենքը դու նախ մեզ ավանդեցիր դրախտում»:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ, ահավասիկ շուրջ մեկ շաբաթ է, որ գտնվում ենք Մեծ Պահքի քառասնօրյա շրջանում: Քառասնօրյա այս շրջանը հատկապես պետք է նվիրված լինի աղոթքի, ապաշխարության, ինքնաքննության և բարեգործության: Քառասնօրյա պահքի կարգը մեզ ավանդվել է Հին Կտակարանից: Այնտեղ տեսնում ենք, որ հանրության սպասարկությանը կոչված ամեն մեկ կարևոր անհատ քառասնօրյա վերապատրաստման մի շրջան բոլորելուց հետո նվիրվել է իր գործին: Այսպես, օրինակ, Մովսես մարգարեն քաշվեց անապատ, ուր աղոթքով ու խոկումով վերապատրաստվեց իր ժողովրդի ազատագրման արքազան առաքելությանը սկսելուց առաջ: Նույն կարգը ավանդաբար մուտք է գործել նաև Նոր Կտակարան, որտեղ ևս տեսնում ենք, որ նախակարապետը՝ Հովհաննես Մկրտիչ, ապաշխարության հրավիրող իր քարոզությանն և մեղքերի թողության համար մկրտել սկսելուց առաջ՝ առանձնացել է անապատային մի վայրում քառասուն օր, ուր աղոթքով և ճգնությամբ ստացել է հոգևոր պատրաստություն և ապա նվիրվել իր սրբազան կոչմանը:

Նույն ձևով, մեր Փրկիչը՝ Հիսուս ևս, թեև կարիքը չուներ այն կատարելու, սակայն ընդունված կարգի համաձայն՝ առանձնացավ մի անապատ վայրում և այնտեղ քառասուն օրեր աղոթքով, ճգնությամբ և

խոկմամբ անցկացրեց, պատրաստվելով իր սրբազան առաքելությանը:

Ըստ դարերի խորքից եկող ավանդության, Հայաստանյայց Եկեղեցում ևս, նորընծա քահանա հայրերը, կանամբի կամ կուսակրոն, քառասուն օր քաշվում են մի վանք, ուր աղոթքով, ճգնությամբ, խոկումով և հոգևոր ընթերցանություններով պատրաստվում են իրենց վերապահված սրբազան ծառայությանը Եկեղեցու ծոցում:

Ահավասիկ, Պահոց քառասնօրյա շրջանը և՛ անհատի, և՛ Եկեղեցու, այսինքն՝ հավաքականության համար մի առիթ է հոգևոր իմաստով վերանորոգման՝ աղոթքի, բարեգործության և ապաշխարության միջոցով: Ապաշխարության այս շրջանը նաև արտաքին շպարների նվազեցման շրջան է. այդ իսկ պատճառով բոլորս նկատում ենք, որ մեր եկեղեցիների լուսաշող խորանները այդ շրջանում վարագուրված են լինում, երգեցողությունները նվազ շքեղությամբ և նույնիսկ տխրամած տոնով են կատարվում, հոգևորականների դասերը սև փիլոններով սքողված են երևում եկեղեցում և այլն: Այս բոլորը խորհրդանշականորեն վկայում են այն մասին, որ Եկեղեցին սգավոր է և ապաշխարությամբ ու հարատև աղոթքով խնդրում է թողություն իր և համայն մարդկության մեղքերի քավության համար:

Պահոց շրջանը Եկեղեցու անդամների համար ճոխ, յուղալի և գրգռիչ կերակուրներից հրաժարվելու մի շրջան է: Եթե հավատացյալների առողջությունը թույլ է տալիս նրան պահեցողություն կատարել, պատշաճ է, որ նա պահի: Իսկ եթե ինչ-ինչ հիվանդություններ պատճառով նա անկարող է պահելու, այդ դեպքում աղոթքով ու բարեգործությամբ թող ամբողջացնի այդ պակասը:

Պահքի նպատակը երկուսն է: Նախ ճոխ ու գրգռիչ ուտելիքներից և ըմպելիքներից հրաժարվելով՝ անհատի մարմինն է մաքրվում ծանր սննդի պատճառած ճնշումներից, ու աղոթքի, ճգնության միջոցով այդ թեթևացած մարմինը կտրվում է աշխարհիկ կյանքի գրգիռներից և հոգևոր խոկումների միջոցով ձգտում է աստվածայինին և հոգևոր երանության:

Պահեցողության գաղափարն անհրաժեշտ է, որ անհատը սրտեռանդն աղոթի: Հավաքական կամ առանձնական աղոթքի միջոցով միայն նա կկարողանա Աստուծո հետ հաղորդակցվել: Նա կարող է աղոթել իր ընտանիքի, բարեկամների, ծնողների, հայրենիքի և համայն մարդկության համար: Երևակայեցեք, թե ինչ հզոր ուժ է երկրից երկինք առաքվում հավաքական աղոթքի պահին, մանավանդ երբ մոլորակի բոլոր մարդիկ համակամ աղոթում են: Մի՞թե խաղաղության և զինաթափության համար եղած աղոթքը այսպիսի աղոթք չէր, որ Աստված լսեց, և խաղաղության արեգակի ծագումը մենք ողջունեցինք 1987 թվականի վերջում:

Բայց միայն պահեցողությամբ և աղոթքով մեր Պահոց շրջանը ամբողջական և նպատակասլաց չի լինի ու մեզ չի պարգևի այն հոգևոր սնունդը, որին այնքան անհրաժեշտորեն կարիքն ունենք, եթե ապաշխարության և մեղքերի թողության համար անհրաժեշտ եղող զղջումը չունենանք:

Ապաշխարության և զղջումի միջոցով մեղքերի թողության հասնելը վսեմագույն նպատակն է ամեն մի հավատացյալի, թողության զգաղոցությունը մեր ուսերից ամենածանր բեռները դեն շպրտելու և հանգիստ շունչ առնելու մի պահ է կարծես: Այս իմաստով էլ Հովհաննես Մկրտիչը, Հորդանան գետի եզերքին, ապաշխարություն էր քարոզում՝ ասելով. «Ապաշխարեցեք, որովհետև մոտ է Աստուծո արքայությունը»: Մեզանից ոչ ոք չի կարող ասել, որ ինքը անմեղ է և արդար: Չկա աշխարհի վրա անմեղ մարդ: Բայց մեղանչականության գիտակցությունը մարդու նրբազգաց, դժվարահաճ և ինքն իր հանդեպ պահանջկոտ լինելու արտահայտությունն է: Երանի նրանց, որոնք, անդրադառնալով իրենց մեղքերին, զղջում են, ապաշխարում ու այդպիսով քավության արժանանում: Մեղքը աղոթքով, զղջումով, ապաշխարությամբ, արցունքով և նյութական զոհողությամբ է քավվում: Մեր Եկեղեցու ապաշխարության շարականները, գրված Ս. Մեսրոպ Մաշտոցի կողմից, մեղավոր մարդու հոգեկան վիճակը լիուլի արտահայտում են. «Մեղք իմ բազում են յոյժ, ծանր են քան զաւազ ծովու, քանզի քեզ միայնոյ մեղայ, ողորմեա ինձ, Աստուած». «Իմ մեղքերը հույժ շատ են, ավելի ծանր, քան ծովի ավազները, որովհետև Քո դեմ մեղանչել եմ, ողորմիր ինձ, Աստված»: Ապաշխարությունը մեղավորի անկեղծ անդրադարձն է իր ուսերին ծանրացող բազում մեղքերի, ու աղոթավոր աղերսավորը ապաշխարությամբ և զղջումով մեղքի ծանր բեռը ցանկանում է թոթափել ու ազատագրվել Տիրոջով:

Բայց եթե պահքը, աղոթքը և ապաշխարությունը առանց բարեսիրության ու զոհողության կատարվեն, իրենց քավիչ նպատակից կարող են շեղվել:

Անհրաժեշտ է, որ ապաշխարող անհա-

տը լինի բարեսիրտ, գթառատ, ողորմած և պատրաստ օգնության իր նմանների հանդեպ:

Աստված մեզ բոլորիս էլ իր թանկագին շնորհներով է զարդարել: Մեզանից շատ-շատերը կյանքում իրենց ընձեռված հնարավորություններից օգտվելով, կարողացել են հասնել բարձր պաշտոնների, դիրքերի, ինչպես նաև նյութական առավել կամ նվազ բարիքների: Ոմանք բարձր դիրքի հասնելով՝ կառչում են իրենց աթոռին անբաժանելիորեն, առանց մտահոգվելու իրենց նմանների ճակատագրով ու օգնության ձեռք չեն երկարում նրանց: Եթե անհատը ընչաքաղց է, պաշտոնամոլ, մեծամիտ ու անձնասեր, նա ոչ մի օգուտ չի կարող տալ իր նմաններին և իր շրջապատին: Եթե մարդ իր դիրքն ու պաշտոնը միայն իր անձի համար է օգտագործում, անիմաստ է, որ նա շարունակի այդ պաշտոնը: Անհատը պետք է գիտակցի, որ Աստված զուր տեղը չէ, որ հնարավորություն է տվել իրեն սովորական մահկանացուների մակարդակից ավելի բարձր աստիճանի վրա կանգնել: Այս իսկ պատճառով ենթական բարոյական հարկադրանքի տակ է գտնվում իր Աստծու և իր ժողովրդի առաջ՝ իր հնարավորության սահմաններում ծառայելու ու օգնելու համար նրանց, ովքեր կարիքի մեջ են գտնվում: Որևէ սովորական մարդ կարող է գիտակցել իր վրա դրված բարոյական պարտականությունները: Նա կարող է օգնել տնանկին ու աղքատին, հիվանդներին այցելել, բանտերում տառապողներին մխիթարել, կյանքում լքված ու անտեր մնացած ծերերին այցելել և օգնության ձեռք մեկնել՝ նյութական և հոգևոր իմաստով, բոլոր նրանց, որոնք կարիքի մեջ են լինում: Մեր առջև բացված, օգնություն հայցող բոլոր ձեռքերին օգնության մի միջոց պետք է գտնենք օժանդակելու համար: Եթե իմ անձը ամեն օր ամենահամեղ խորտիկներով եմ կերակրում, եթե ամենափառահեղ կառքերի մեջ եմ ճամփորդում, եթե փառավոր պալատների մեջ եմ բնակվում, և այս բոլորը սոսկ իմ փառքին են ծառայում, նշանակում է՝ իզուր եմ: Կա՞ աշխարհում մի նյութական բարիք, որ հավերժորեն մեր սեփականությունը մնա: Չկա: Կյանքում ամեն ինչ անցավոր է: Մի օր արդար դատավորի առջև երբ կանգնենք, ի՞նչ պատասխան ենք տալու մեզ տրված հարցերին: Ավետարանը ասում է. «Անիրավ մամոնայից, այսինքն՝ փողի միջոցով ձեզ համար անկորնչելի բարեկամներ ստեղծեցեք», այսինքն՝ փողը օգտագործեցեք միայն ու միայն բարիք ստեղծելու համար այս աշխարհում: Որքան ճշմարիտ է հնչում Ավետարանի երկրորդ պատգամը ևս փողի մասին. «Ձեզ համար գանձեր դիզեցեք երկնքում, որտեղ ոչ ցեցը և ոչ էլ ուտիճը կարող են ապականել այն»: Այն գանձը, որ դիզելու ենք երկնքում, սիրելիներ, միմիայն զոհողության, սիրո, ծառայության, մարդասիրության և ողնակարկ նվիրումի միջոցով է դիզվում: Ահա, այս գանձն է կարևորը, որովհետև նա է, որ մնում է հավիտյան և մեզ արժանացնում մեր Տիրոջ ու Հոր անանց ներկայությունը վայելելու երկնքում:

Հայ ժողովրդի պատմության մեջ, 10-րդ դարում, ունեցել ենք մի թագավոր Աշոտ Գ անունով: Սա այն թագավորն էր, որ իր արքայանիստը Կարսից Անի էր տեղափոխել: Շինարար ու բարեսիրտ մի թագավոր է եղել նա, այնքան խոնարհ՝ բնավորությամբ, որ թագավոր ընտրվելուց միայն ինը տարի հետո է թագավորական օծում ստացել և գահ բարձրացել: Նրա գլխավոր նպատակն է եղել իր երկիրը թշնամիների հարձակումներից հեռու պահել՝ խաղաղության դաշինքներ կնքելով: Բացի այդ, նա քաղաքացիների կյանքի ապահովության համար պարապպատել է Անին: Երկրի բնակիչներին դյուրություններ է ընձեռել՝ առևտուրը և արհեստները զարգացնելու համար: Կառուցել է եկեղեցիներ, վանքեր, հիվանդանոցներ, որբանոցներ, բորոտանոցներ, հյուրանոցներ և ծերանոցներ՝ իր ժողովրդի կյանքի բարվոքման համար: Ինքը երբեք շռայլ չի ապրել, ոսկով, արծաթով ափսեներից չի սնվել, թանկարժեք բաժակներից չի խմել, ընդհակառակը, քաղաք այցելող օտարականներին, այնտեղ բնակվող աղքատներին ու անկյալներին իր սեղանից է կերակրել և իր բաժակից գինի է մատուցել նրանց: Իր ընտանեկան վեճերը լուծել է արդար կերպով, առանց ցավ պատճառելու իր շրջապատի մարդկանց: Այդ պատճառով էլ Աշոտ Գ թագավորին ժողովուրդը տվել է «Ողորմած» մակդիրը, ընդգծելու համար նրա բարեսրտությունն ու բարոյական կերպարը: 977 թվականին, երբ Աշոտ Ողորմած Հայոց թագավորը մահացել է, մեծ սուգ է տիրել Հայոց աշխարհում: Մինչև այսօր նա հիշվում է: Նրա մասին բազում դրվատալից գրքեր են գրվել, և նրա գերեզմանը Ախուրյան գետի ափին Ս. Գևորգ եկեղեցու բակում գտնվող ուխտավայր է դարձել մեր ժողովրդի համար:

Սիրելի հավատացյալներ, թեև մեր եկե-

ղեցին Արտաքսման այս կիրակի օրը վերհիշում է Նախամարդ Ադամի դրախտից արտաքսումը, նրա անհնազանդությունն ու կամքի թուլությունը, սակայն դրա փոխարեն, ես ձեզ հատկապես խոսեցի պահեցողության, այսինքն՝ մեր Նախահոր Ադամի կորցրած երանական կյանքի վերագտման կերպի մասին:

Մեծի Պահոց այս հոգեշորոգ քառասնօրյա շրջանում բոլորս անխտիր պահեցողությամբ, աղոթքով, ապաշխարությամբ և բարեգործությամբ վերագտնենք մեր մեջ աստվածային տիպն ու կերպարը և անկորնչելի դարձնենք այն մեր կյանքի բոլոր օրերին: Նաև մեր աղոթքն ու պաղատանքը թող քաղցրությամբ ընդունվեն մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կողմից, որպեսզի նա պարգևի աշխարհիս խաղաղություն, մարդկանց մեջ սեր և արդարություն: Ամեն:



ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊՍ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

ՔԱՐՈԶ
(Ծաղկազարդի տոնին)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Օրհնութիւն Որդւոյ Դաւթի, օրհնեալ որ գայ յանուն Տեառն, օրհնութիւն ի բարձունս» (Մատթ. ԻԱ 9):

Օրհնության այս գեղեցիկ խոսքը, սիրելի հավատացյալներ, ուղղված էր մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, այն օրը, երբ նա համեստորեն նստած մի ավանակի վրա, մուտք էր գործում Երուսաղեմ՝ վերջին անգամ ներկա գտնվելու և մասնակցելու Պասեքի տոնին: Հավատացյալ ժողովուրդը ծանոթ էր Զաքարիայի մարգարեությանը, ըստ որի Փրկիչը սրբազան քաղաք պիտի մտներ այսպիսի խոնարհությամբ՝ ավանակի վրա նստած, աստվածային տնօրենությունները իրենց լրումին հասցնելու համար: Ժողովուրդը ճանաչեց նրա փառքը այդ համեստության մեջ՝ իբրև Աստված ու Փրկիչ, Երկնավոր Արքա. բազմությունը Քրիստոսին դիմավորեց նման գեղեցիկ խոսքերով և ուղեկցեց քաղաքի դարպասներից մինչև տաճար: Ամբողջ այդ տարածությունը անցնելիս նրանք ծաղիկներ, ձիթենու և արմավենու դալար ճյուղեր էին սփռում Հիսուսի ոտքերի առջև և փառաբանության խոսքեր էին բացականչում:

Հավատացյալները խոնված էին սուրբ քաղաքում՝ Երուսաղեմում, որովհետև մոտենում էր Զատկի կամ Պասեքի տոնը: Նրանք ամեն տարի այդ օրերին ուխտագնացություն էին կատարում և տաճարի սրբազան կամարների տակ աղոթում էին Բարձրյալին և շնորհներ ու պարգևներ էին խնդրում նրանից: Նման շնորհների ու պարգևների կարոտն ու ծարավն ուներ հավատացյալ ժողովուրդը, ինչպես ամենուրեք ու բոլոր ժամանակներում: Նրանք, կրոնական հույզերով ու ապրումներով առլեցուն, երկրի բոլոր ծայրերից հավաքվում էին Երուսաղեմ: Գալիս էին ամեն տեղից ու ամեն տեսակ մարդիկ, այլազան մտածումներով ու ըմբռնումներով, և բոլորը կարծեք միանում ու միասնանում էին այդ սրբազան մթնոլորտի մեջ:

Քրիստոսի ժամանակ հրեա ժողովուրդը տագնապալից ժամանակաշրջանի մեջ էր գտնվում: Նրանք Հռոմից նվաճված և քաղաքական անկախությունից զրկված էին: Տենչում էին վերականգնել իրենց անցյալի փառքը, ինչպես Դավիթ թագավորի օրերին էր: Համախմբվում էին Երուսաղեմում՝ իրենց կրոնական ասլրումներին միացնելու նաև իրենց ազգային ու սրբազան հույսերն ու ապրումները: Ահա թե ինչու Քրիստոսին նրանք Դավթի որդի հորջորջեցին և օրհնություն ու օսաննա էին կանչում նրան:

Գիտեին, որ նա եկել էր փրկելու իրենց: Մարդկորեն, սակայն ոմանք այդ փրկությունը ըմբռնում էին սոսկ ազգային կամ քաղաքական ազատագրության իմաստով, որպես «թագավոր հրեից»: Նրանց մեջ ալելի խորատես ու ճշմարիտ հավատացյալներ էին միայն կարողանում զգալ, որ

Քրիստոսի գալուստը միայն երկրային նրպատակներ չուներ, այլ մանավանդ իր հավիտենական թագավորությունը հաստատելու ձգտում: Այդ օրերին, Քրիստոսի Երուսաղեմ մուտք գործած պահին, հռոմեական նվաճողները, ապահովության պատրվակով, բայց մանավանդ հռոմեական բռունցքի ուժը ցուցադրելու համար, զորքեր էին մտցրել Երուսաղեմ: Զինավառ հեծյալները ամբարտավանորեն երթևեկում էին քաղաքի փողոցներում: Ճիշտ է, ժողովուրդը նվաճված էր, սակայն նրա հոգեկան արիությունը և ազգային արժանապատվությունը երբեք տեղի չէր տալիս օտարի բռնության տակ, մանավանդ զատկական այդ օրերին. ժողովուրդը, մակաբայեցիների շրջանից սկսած, քանիցս ցույց էր տվել իր կամքի անընկճելիությունը: Ոչ մի հռոմեական նժույգի սմբակ չէր տրորել հավատացյալ ժողովրդի հրեական արժանապատվությունը: Ընդհակառակն, ուժի նման ցուցադրությունը նրա մեջ ցասում էր առաջացնում ու ավելի ուժգնորեն մղում ընդվզումների: Այդ հույսն էր, ահա, որ բոլորին միանգամից մղեց դեպի Քրիստոս: Նրանք Քրիստոսի համեստության մեջ զգացին Աստվածորդու իրական ուժը, ճշմարտության ձայնը և իրենց հոգիները բոլորանվեր հանձնեցին մեր Տիրոջը: Այդ պահին նա էր միայն նրանց միակ և հուսալի ապավենը՝ Փրկիչը:

Սիրելի հավատացյալներ, ահավասիկ ամեն տարի Ծաղկազարդի այս օրը այդ հիշատակությունն է կատարում քրիստոնեական Եկեղեցին ամենուրեք աշխարհում: Բոլոր քրիստոնյա հավատացյալները այսօր իրենց անձերը ամբողջությամբ հանձնում են այդ հեզ և արդար Տիրոջը, որն իր հեզությամբ է մեզ ճանապարհ ցույց տալիս և իր խոնարհությունն է սովորեցնում մեզ: Այդ հեզության ու խոնարհության մեջ, սակայն, պարունակված են իրական արդարությունն ու ճշմարտությունը, մարդկային արժանապատվությունն ու ինքնասիրությունը և հավիտենական փրկությունը: Այսօր դուք ևս, հավաքված Քրիստոսակերտ այս սրբազան տաճարի մեջ, այդ պատմական հիշատակությունն եք կատարում ու ձեր հավատավոր հոգիներն եք ընծայաբերում հավիտենական ճշմարտության լույսին: Անցել է արդեն Մեծ Պահքի մեծ մասը: Այն այսօրվանից սկսած իր եզրափակիչ փուլի մեջ է մտնում, որը կոչվում է Ավագ շաբաթ, որ խորհրդանշվում է Քրիստոսի ապրած վերջին օրերը Երուսաղեմում: Այս օրերին եթե հավատացյալները ճշմարտորեն բացեն իրենց հոգու աչքերը, ապա ականատես կդառնան Հիսուսի ապրած փառքին և կատարած տնօրենություններին: Պիտի լսեն նրա ամենաիմաստուն քարոզությունները ու պատգամները: Պիտի տեսնեն, թե նա ինչպես է անտեսվելու անհասկացող, գոռոզ, ամբարտավան ու նախանձոտ մեծավորների և իշխանների կողմից: Ինչպես է անարգվելու ու նվաստացվելու: Ի վերջո, բավարարություն տալով իրենց քմահաճ եսասիրությանը, նրանք պիտի սպանեն մեր Տիրոջը խաչի վրա: Սակայն մեղյալները չէ, որ փրկում են մարդկանց, այլ կենդանիները: Եվ Հիսուս, որ Աստված էր և փրկության նպատակով ու ծրագրով էր մարմին առել և եկել աշխարհ, թաղվելուց երեք օր հետո հարություն կառնի՝ վերջնականապես կհաստատի իր Եկեղեցին՝ հավիտենական թագավորությունը, որպես հավատացյալների փրկության ճշմարիտ միջոց: Ծաղկազարդի օրը Քրիստոսի անձի մեջ ճշմարտվեց ժողովրդի նրան ուղղած օրհներգությունը, և նա մահվան ու մեղքի վրա հաղթանակած վերականգնեց Դավիթ թագավորի ամբողջական փառքը, հզորությունը, ուժը, ճշմարտությունը և արդարությունը: Այս փառքով նա սկսեց թագավորել բոլոր քրիստոնյաների վրա, ու մինչև այսօր նա է հավատացյալներիս ճշմարիտ թագավորը, միակ Տիրակալը: Ոչ մի երկրավոր տիրակալ չի կարող իր ուժով, շքեղությամբ, հզորությամբ փոխարինել այդ հեզ, բայց մեծ թագավորին, Երկնային թագավորին, մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին:

Մեր ժողովուրդը, սիրելի հավատացյալներ, քրիստոնեական կրոնի այս վեհ ճշմարտությունները կարողացավ զգալ ու ընդունել անմիջապես և անվերապահորեն իր ճակատագիրը կապեց դրանց: Հայ ժողովրդի նոր պատմությունը սկսվեց Առաքյալների և Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզչությամբ ու քրիստոնեության դարձով: Քրիստոնեական բարի և ազնիվ ուսմունքի մեջ է, որ կազմվեց մեր ազգային իսկական դիմագիծը: Մեր ժողովուրդը Ավետարանի պատգամները ողջունեց խանդավառությամբ և իր իսկ կյանքով ապրեց նրա քարոզած ճշմարտությունները: Մենք կարողացանք կերտել իմաստալից մի կյանք, փառապանծ մի պատմություն փառքի, հզորության, բարձրացումի, բայց նաև անկումի պահերով: Ոչ բարձրացման և ոչ անկման պահին մեր ժողովուրդը չլքեց իր հավատքը, ընդհակառակն, միշտ ամրորեն

փարեց նրան, ուժ ստացավ նրանից ու ամեն անգամ բոլոր իրավիճակներից կարողացավ հաղթանակած դուրս գալ:

Միրելի հավատացյալներ, Մեծ պահքը իր ավարտին է հասնում, և ես վերապրում եմ այն հուզումները, որ ամբողջ պահոց շրջանին ապրեց մեր ժողովուրդը: Ես նկատի ունեմ Արցախ-Ղարաբաղի հարցի շուրջ ստեղծված կացությունը:

Մեր ժողովուրդը, Հայաստանում թե արտասահմանում, դեպքերի զարգացման բոլոր պահերին գտնվեց իր բարձրության վրա: Նա ոչ մի անկարգ քայլ չկատարեց: Նա բարձր պահեց իր հոգու վեհությունը և փաստեց, որ ինքը իսկապես պատմության մեջ ապրելու արժանի ժողովուրդ է, հրավ քրիստոնյա ժողովուրդ: Այսօր բոլորիս հոգիների մեջ վառված են Ծաղկազարդյան ու ազգային ճշմարիտ, ազնիվ զգացումներ, բայց նաև մտահոգություն:

Ուզում եմ անազանգ տալ նրանց, ովքեր պանդուխտի ցուպը և ուծացումը գերադասում են հայրենի հողից ու տնից: Ոմանք իրենց արդեն իսկ տկար պատճառաբանություններին այս օրերին ավելացրել են ևս մեկը. հայ ժողովրդի ապագայի նկատմամբ ոչ առարկայական, հոռետեսական կեցվածքը: Ոչ մի պատճառաբանություն չի կարող արդարացնել Հայրենիքը լքելն ու հեռանալը: Ընդհակառակն, ճշմարիտ հայրենասիրությունը այն է, որ մղում է անհատին կառչել իր հողին, հաղթահարել դժվարությունները և հարատևել: Այսօրվա հրամայականն է, և այս սուրբ բեմից մանավանդ մեր երիտասարդությանն համար թող հնչի իբրև պատգամ ու կոչ. առողջ կյանք վարել, կանուխ ընտանիք կազմել և շատ զավակ ունենալ:

Եկեք այսօր, մեր սրտերի Երուսաղեմ մուտք գործած Փրկչին դարձյալ օրհներգություն ուղղենք և խնդրենք, որ նա իր ճշմարտությամբ լուսավորի և զորացնի մեր մտքերն ու հոգիները: Թույլ չտա երբեք, որ հայ ժողովուրդը անհատապես կամ հավաքաբար որևէ սխալ գործի, այլ ընդհակառակն, ամուր կառչած իր հայրենական հավատքին՝ ճիշտ ընթացի իր կրոնական և ազգային առաքելությունը ու մշտապես հավատարիմ մնա իր հուսառատ ապագայի տեսիլքին:

Թող Տերը օրհնի բոլորիդ, ավելացնի ձեր ազգային և կրոնական ազնիվ զգացումները, որոնցով դուք էլ կարողանաք ձեր հերթին դաստիարակել ձեր զավակներին և թոռներին, հավերժացնելու համար մեր ժողովրդի ճշմարիտ ու հաղթական երթը:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ», ամեն:

ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ

ԱՎԱԳ ՇԱԲԱԹՎԱ ԽՈՀԵՐ

ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Այսօր դու Նորից խաչ ես բարձրանում
Մեղքերի համար հանուր մարդկության,
Արյուն ես հեղում թանկ ու սրբազան,
Վճիռն պարտության փոխում հաղթության:
Քո աստվածային շնորհներն ամեն
Տվիր անսակարկ առատ ու անծիր,
Իբրև սերմնացան հողին հանձնեցիր
Երկնավոր սերմեր հույսի, հարության:
Իբրև հաց կենաց դու երկնից իջար,
Բանին հոգևոր մատռվակ եղար,
Մարդկանց ցավերին, կույրին, բորոտին,
Ձերթ բժիշկ սրտցավ հասար օգնության:
Որպես գառ անմեղ դու խոնարհվեցիր,
Փառքից Հայրական կամոք զրկվեցիր,
Իջար դու աշխարհ, մեզ նմանվեցիր,
Մեզ հավերժ կյանքի հույսով պճնեցիր:
Քո զոհողությամբ, Տեր, մեզ ուսուցիր
Խորհուրդը սիրո և ողորմության,
Աշակերտներիդ ոտքը լվացիր,
Որպես գրավական քո խոնարհության:
Հուդան համբույրով իր Տիրոջ մատնեց,
Երեսուն արծաթ դրանով շահեց,
Ստրուկն արծաթի՝ արծաթով գնվեց,
Մարմինն ու հոգին դժոխքում այրվեց:
Ատյանից ատյան քեզ քարշ տվեցին,
Զրպարտությունով դատապարտեցին,
Խաչ դրին ուսիդ, Գողգոթա տարին,
Հետն ավազակաց անարգ խաչեցին:
Ով ոտնահարվող դու արդարություն
Եվ խաչ բարձրացված ով ճշմարտություն,
Հիսուսի թաղմամբ թեև թալվեցիք,
Բայց քիչ վերջ մահից հարություն առիք:

Կյանքում չարն է միշտ թվում տիրական,
Բայց արդարությանն կանչն է տևական,
Մահվան փոսի մեջ իսկ ճշմարտությունն
Ձեռ կարող թաղել մարդիկ վատանուն:
Այսօր դու նորից խաչ ես բարձրանում,
Իբրև մահապարտ սուրբ արյուն թափում,
Արյան լճակից ծիլեր են ծաղկում,
Կյանքով հաղթական աշխարհը լցնում:

ՔԱՐԵ ԱՂՈԹՔ
(Ավագ Ուրբաթ)

Որքան համբույր կա կնքված քո ճակատին,
Խաչքար խոհուն, քարե աղոթք ու սրբություն:
Որքա՜ն աղերս ու պաղատանք կա թաքնված
Քո խորշերում, խաչքար հույսի՝ սիրով ցողված:
Քարակերտյալ դու ներշնչանք, հույսի կոթող,
Մութ խավարում սիրո լապտեր պլպլացող,
Անմահ Փրկչի նշան հաղթող դու շողարձակ,
Կյանք զգեցած դու մեր հավատ քարե քանդակ:
Խոնարհվում եմ ես քո առաջ և ծնրադրում,
Ձարն զգետնող խորհրդանիշ դու փրկության,
Սյուն չես բնավ անարգանքի ու պարտության,
Այլ՝ հարության շունչ ես ծաղկուն կյանքով բուրյան:
Համբուրում եմ քեզ բյուր անգամ ես ծնրադիր,
Համբուրելով հայ վարպետի ձեռքը ճարտար,
Տեր, այդ ձեռքում որքան հավատ դու խտացրիր,
Որ արարեց քարից աղոթք, խաչն այս թրթիռ:

ԱՌ ՅԱՐՈՒՑԵԱԼՆ
(Զատիկ)

Ծաղիկ բուրեան դու բացեալ
Քառաթև խաչ զարդարեալ,
Ձդրունն դժոխոց խորտակեալ,
Կեանք ի մահուանէ բուսեալ:
Ծաղիկ կենաց դու գարնան
Եւ դատակնիք յաղթութեան,
Ձխաւարն լուսով ես պճնեալ,
Իսպառ զմահն զգետնեալ:
Ծաղիկ-ծաղիկ դու բուրեան,
Կամուրջ լուսոյ փրկութեան,
Ցանիծից զմեզ դու բարձեալ,
Հոտ անուշից ես բուրեալ:

«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(АПРЕЛЬ 1988 г.)

1. Пасхальная проповедь Его Святейшества, Католикоса Всех Армян Вазгена I в Кафедральном соборе святого Эчмиадзина, 3 апреля 1988 г. (стр. 3—4).

2. Епархиальная жизнь

а) **Диакон Саак Сукиасян**—Торжественная литургия и благословение пожертвований в Кафедральном соборе св. Акопа в Лионе (стр. 5—6).

б) **Диакон Саак Сукиасян**—Открытие кафедры армяноведения в Богословском университете Лиона (стр. 6—7).

3. Обмен приветственными телеграммами и посланиями по случаю празднества светлого Воскресения Спасителя между Его Святейшеством Верховным Патриархом и Католикосом Всех Армян Вазгеном I и главами сестер-Церквей (стр. 8—10).

4. Поздравительное послание Его Святейшества Католикоса Всех Армян Вазгена I по случаю празднеств светлого Воскресения Спасителя трем преосвященным Престолам, всем епархиальным предводителям и церковным общинам Армянской Церкви (стр. 11—12).

5. Торжественная патриаршая светая литургия и проповедь в праздник светлого Воскресения Спасителя, 3 апреля 1988 г. (стр. 13).

6. Пребывание председателя Всесоюзного Совета по делам религии при Совете министров СССР К. М. Харчева в Армении, 4—5 апреля 1988 г. (стр. 14).

7. Празднование дня Святых Варданидов и тезоименитства Его Святейшества Католикоса Вазгена I в Первопрестольном Святом Эчмиадзине, 11 февраля 1988 г. (стр. 15—21).

8. О присвоении степени архимандрита преподобным иеромонахам—Сасуну Змрухтяну, Араврату Галтагчяну, Ошакану Гюльгюляну, 23—24 февраля 1988 г. Биографии высокопреподобных отцов—архимандрита Сасуна Змрухтяна, архимандрита Арарата Галтагчяна, архимандрита Ошакана Гюльгюляна (стр. 22—28).

9. Рукоположение во священники диаконов—Роберта Арутюняна, Маргара Тертеряна, Левона Кесабляна, 13 февраля 1988 года и их биографии (стр. 29—32).

10. **Иеромонах Абраам Мкртчян**—Конференция молодой монашествующей братии Армянской Церкви в Первопрестольном Святом Эчмиадзине 16—22 февраля 1988 года и краткое описание протоколов заседаний (стр. 33—42).

11. Защита дипломных работ семи выпускников Духовной академии св. Эчмиадзина—священника Амазасна Бабуджяна, диакона Грачия Акопяна, диакона Геворга Аджапагяна, диакона Камо Абраамяна, диакона Гарника Карапетяна и диакона Самвела Ованесяна, 10 марта 1988 г. (стр. 43—45).

12. **Диакон Геворг Аджапагян**—Первая сессия научной конференции в Первопрестольном св. Эчмиадзине, посвященной 350-летию со дня перевода духовной академии из Ованаванка в св. Эчмиадзин, 14—16 марта 1988 г. (стр. 46—47).

13. Церковная хроника, новости: литургии, проповеди и описание других торжеств в Первопрестольном Святом Эчмиадзине за январь-февраль-март-апрель месяцы 1988 года (стр. 48—51).

14. О присвоении Его Святейшеством Католикосом Вазгеном I (кондак № 1523) степени протоиерея благочинному монастыря св. Рипсиме преподобному отцу Гевонду Арутюняну (стр. 51).

15. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Нерсеса Бозабаляна в Кафедральном соборе св. Эчмиадзин, 21 февраля 1988 г. (стр. 52—55).

16. Проповедь Его Преосвященства епископа Григориса Бунпатяна на праздник «Входа Господня в Иерусалим» (Вербное воскресение) в Кафедральном соборе св. Эчмиадзина, 27 марта 1988 г. (стр. 56—58).

17. **Нерсес Ванакан**—Размышления в Страстную Неделю

Великий четверг (стихотворение)—(стр. 59).

Каменная молитва (стихотворение)—(стр. 60).

К Воскресшему (стихотворение)—(стр. 60).

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(APRIL 1988)

1. The sermon of Holy Easter of His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians, given in the Holy Cathedral of St Etchmiadzin, 3rd April 1988 (pp. 3—4).

2. Diocesan news:

a) **Deacon Sahak Sookiassian**—Solemn mass and blessing of offering in the Mother Church of St. Hagop of Lyon (pp. 5—6).

b) **Deacon Sahak Sookiassian**—Opening of the armenological chair in the University of Lyon (pp 6—8).

3. The cables and letters of greeting exchanged between His Holiness Vasken I, the Supreme Patriarch and Catholicos of All Armenians, and the spiritual heads of the Sister Churches, on the occasion of the feast of Holy Resurrection (pp. 8—10).

4. The congratulatory letters of His Holiness to the three hierarchical Sees of the Armenian Church, all the diocesan prelates and church communities, on the occasion of the feast of Holy Resurrection (pp. 11—12).

5. Solemn mass celebrated and sermon given on the occasion of the Holy Resurrection feast of our Saviour, 3rd April 1988 (p. 13).

6. The Chairman of the Council for Religious affairs of the U.S.S.R. Council of Ministers Mr. Constantin Kharchev in Armenia, 4—5th April 1988 (p. 14)

7. The commemoration of the Day of Saint Vardan in the Holy See, 11th February 1988 (pp. 15—21).

8. About the delivery of the special doctoral degree in theology and the biographies of Reverends Sassoon Zemrookhtian, Ararat Gallakdjian and Oshagan Oulgulian, 23—24th February 1988 (pp. 22—28).

9. About the ordination of deacons Robert Harootiunian, Markar Terterian and Levon Kessablian and their biographies, 13th February 1988 (pp. 29—32).

10. **Rev. Abraham Mekertchian**—Meeting of the young clericals of the Armenian Church's dioceses in the Holy See of Etchmiadzin (16—22 February 1988) and the acts of the sessions (pp. 33—42).

11. The presentation of the thesises in the Theological Seminary of the Holy See, 10th March 1988 (pp. 43—45).

12. **Deacon Guevorg Atchapahian**—The first session of the symposium devoted to the 350th anniversary of the Theological Seminary's transfer from the monastery of Hovhannavank to the Holy Etchmiadzin 14—16th March 1988 (pp. 46—47).

13. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and descriptions of Church festivities in the Holy See during the months of January-February-March-April 1988 (pp. 48—51).

14. By His encyclical No. 1523, dated 4th January 1988, His Holiness has granted the degree of archpriest to Father Ghevond Harootiunian, the sacristan of the monastery of Holy Hripsimé (p. 51).

15. The sermon of Archbishop Nerses Bozabalian given in the Holy Cathedral of St. Etchmiadzin 21st February 1988 (pp. 52—55).

16. The sermon of Bishop Grigoris Boonlatian given in the Holy Cathedral of St. Etchmiadzin, on the occasion of Palm-Sunday, 27th March 1988 (pp 56—58).

17. **Nerses Vanakan**—Reflections about the Holy Week:

.Maundy Thursday" (poem)—(p. 59).
.Prayer of stone" (poem)—(p. 60).
.To the resuscitated" (poem)—(p. 60).

„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(AVRIL 1988)

1. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 3 avril 1988 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la sainte fête de Pâques (pp. 3—4).

2. Vie diocésaine:

a) Diacre Sahak Soukiassian—Messe solennelle et cérémonie d'offrande dans l'église arménienne St. Jacques de Lyon (pp. 5—6).

b) Diacre Sahak Soukiassian—Ouverture d'une chaire d'arménologie à l'université de Lyon (pp. 6—7).

3. Echange de télégrammes et de lettres de félicitation entre Sa Sainteté Vasken Ier et les chefs spirituels des Eglises soeurs à l'occasion de la fête de la sainte Résurrection de notre Seigneur Jésus-Christ (pp. 8—10).

4. Lettres de félicitation de Sa Sainteté adressées aux chefs des trois sièges hiérarchiques, aux prélats diocésains et aux communautés religieuses de l'Eglise apostolique arménienne à l'occasion de la fête pascale (pp. 11—12).

5. Messe solennelle célébrée le 3 avril 1988 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la fête de la Sainte Résurrection de notre Sauveur (p. 13).

6. Séjour en Arménie de M. Constantin Khartchev, président du Conseil des Affaires Religieuses près le Conseil des Ministres de l'U.R.S.S. (4—5 avril 1988)—(p. 14).

7. Commémoration de la journée de Saint Vartan au Saint-Siège d'Etchmiadzine (11 février 1988)—(pp. 15—21).

8. Collation du degré de docteur particulier en théologie aux Pères Sassoun Zemroukhtian, Ararat Gallakdjian et Ochakan Gulgulian (23—24 février 1988). Biographies des Pères sus-mentionnés (pp. 22—28).

9. Ordination des diacres Robert Haroutiunian, Markar Tertérian et Lévon Kessablian (13 février 1988). Biographies des diacres sus-mentionnés (pp. 29—32).

10. Père Abraham Mekertchian—Réunion de jeunes ecclésiastiques des diocèses de l'Eglise apostolique arménienne tenue du 16 au 22 février 1988 au Saint-Siège d'Etchmiadzine. Procès-verbaux des séances tenues au cours de cette réunion (pp. 33—42).

11. Soutenance de thèses au séminaire théologique du Saint-Siège d'Etchmiadzine (10 mars 1988)—(pp. 43—45).

12. Diacre Guévorg Atchapahian—Première session du symposium tenu du 14 au 16 mars 1988 au Saint-Siège d'Etchmiadzine et consacré au 250e anniversaire du transfert à Saint-Etchmiadzine de l'académie de théologie du monastère de Hovhannavank (pp. 46—47).

13. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois janvier-février-mars-avril 1988 (pp. 48—51).

14. Par Son Encyclique No. 1523 du 4 janvier 1988 Sa Sainteté a conféré le titre d'archiprêtre au Père Ghévonde Haroutiunian, sacristain du monastère de Sainte Hripsimée (p. 51).

15. Sermon de l'archevêque Nersès Bozabalian prononcé le 21 février 1988 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 52—55).

16. Sermon de l'évêque Grigoris Bouniatian prononcé le 27 mars 1988, le dimanche des Rameaux dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp 56—58).

17. Nersès Vanakan—„Réflexions sur la semaine sainte":

„Jeudi saint" (poème)—(p. 59).

„Prière de pierre" (poème)—(p. 60).

„Au Ressuscité" (poème)—(p. 60).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի Սուրբ Զատկական քարոզը՝ սրտասանված Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում 3

ԹԵՄԱԿԱՆ ԿՑԱՆՔ

ՍԱՀԱԿ ՍՐԿ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ—Հանդիսավոր պատարագ և մատաղօրհնություն Լիոնի Սուրբ Հակոբ Մայր եկեղեցվո մեջ 5

ՍԱՀԱԿ ՍՐԿ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ—Բացում Լիոնի Աստվածաբանական համալսարանի հայագիտական ամպիոնին 6

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 8

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու Նվիրապետական հրեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին 11

Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Փրկչի հրաշափառ Հարության տոնի առթիվ 13

ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ տիար Կոնստանտին Խարչևը Հայաստանում 14

Սրբոց Վարդանանց տոնակատարությունը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում 15

Մասնավոր վարդապետական աստիճանի տվչություն 22

Տ. Սասուն վարդապետ Զմրուխտյան 26

Տ. Արարատ վարդապետ Գալթագճյան 27

Տ. Օշական վարդապետ Գյուլգյուլյան 28

Քահանայական ձեռնադրություն Ս. Գայանե վանքում 29

ԱԲՐԱՀԱՄ ԱԲԵՂԱ ՄԿՐՏՉՅԱՆ—Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրիտասարդ միաբանների հավաքույթ 33

Ավարտաճառների պաշտպանություն հոգևոր ճեմարանում 43

ԳԵՎՈՐԳ ՍՐԿ. ԱՋԱՊԱՀՅԱՆ—Հոգևոր ճեմարանի՝ Հովհաննավանքից Ս. Էջմիածին փոխադրության 350-ամյակին նվիրված գիտական զեկուցումների և ընտաշրջանը Մայր Աթոռում 46

ՄԱՑՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 48

Ավագ քահանայության տվչություն 51

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊ. ՊՈՂԱՊԱՆՅԱՆ—Քարոզ 52

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊՍ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ—Քարոզ 56

ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ—Ավագ շաբաթվա խոհեր

Ավագ Հինգշաբթի 59

Քարե աղոթք 60

Առ Ցարուցեալն 60

«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . 61

«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin 62

«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine . . . 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine». Etchmiadzine. Arménie. URSS

Հանձնված է արտադրության 07.04.1988 թ.: Ստորագրված է տպագրության 10.05.1988 թ.:
Տպագրական 4 մամուլ+1 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 597

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1988 թ.